ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹՐՆԵԹՆԼ ՀԱՅԱՍՏԱՆ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն

Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն

Ծրագրերի նպատակներն ու իրականացման փուլերը

Հայաստանում «Թրանսփարենսի Ինթրնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն շարժումը ներկայացնող «Տարածաշրջանային զարգացման կենտրոն» կազմակերպության (ՏԶԿ) կողմից իրականացված «Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» (ՀՏԿ) ծրագիրը ֆինանսավորվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից: Ծրագրի նպատակն էր պետական կառույցներին, քաղաքացիական հասարակությանը և զանգվածային լրատվամիջոցներին (ԶԼՄ) ներկայացուցիչներին տրամադրել տեղեկատվություն Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն բարեպոխումների մասին, տեղական և միջազգային փորձը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում, ինչպես նաև կազմակերպել տարբեր միջոցառումներ՝ զարգացնելով հասարակական մոնիտորինգի կարողությունը, որն իր մեջ պարունակում է վերապատրաստուման ծրագրեր և փորձնական մոնիտորինգ տեղական մակարդակում:

Ծրագիրն ընթացել է երկու փուլով՝ 2002թ. նոյեմբերից 2004թ. հոկտեմբերը և 2004թ. նոյեմբերից 2005թ. նոյեմբերը: Ծրագրի 1-ին փուլում Արագածոտն, Լոռվա, Տավուշի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերի գործընկեր կազմակերպություններից ՀՏԿ մարզային ներկայացուցիչներ էին ընտրվել Գևորգ Եղիազարյանը՝ Հասարակական երկխոսությունների և նախաձեռնությունների կենտրոնից, ք. Աշտարակ, Իրինա Հակոբյանը՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնից, ք. Վանաձոր, Վահե Մարդանյանը՝ Հայաստանի ֆինանսիստների միավորման Իջևանի մասնաճյուղից (ծրագրի 2-րդ փուլում նրան փոխարինել է Արման Գևորգյանը), Ռուզաննա Ղազարյանը՝ «Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ից, ք. Վայք և Արտաշես Տոռոզյանը՝ Գորիսի ուսուցիչների միությունից, ք. Գորիս: Մարզային ներկայացուցչություններում ստեղծվել են գրադարաններ, որոնց փոխանցվել է մեկական համակարգիչ և գրականություն:

«Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագիրը ֆինանսավորվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից: Ծրագիրն ընթացել է 2005թ. մարտ–նոյեմբեր ամիսներին և համատեղվել է ՀՏԿ ծրագրի հետ: «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրի նպատակն էր նպաստել թափանցիկության և մասնակցության խթանմանը տեղական ինքնակառավարամն մակարդակում:

Նշված ծրագրերն իրականացվել են տեղեկատվության հավաքագրման և վերլուծության, հարցումների անցկացման և ֆոկուսխմբային քննարկումների, վերապատրաստումների, խորհրդատվությունների և մոնիտորինգի կազմակերպման միջոցով: Ծրագրերի արդյունքները ներկայացվում են ամսական գործողությունների կտրվածքով: Առանձին հավելվածների տեսքով ներկայացվում են նաև ծրագրային գործողությունների վերաբերյալ հրապարակումները և լուսանկարները (տես Հավելված 1) և այլ նյութերը:

Գործողությունների նկարագիր

2004թ. նոյեմբեր-դեկտեմբեր

ՏՁԿ ղեկավարության կողմից կատարվել էին մի շարք նախապատրաստական աշխատանքներ, գնահատվել են նախորդ փուլի իրականացումն ու դրա արդյունավետությունը: ՀՏԿ աշխատակազմը շարունակել է ՏՁԿ գրադարանի հաճախորդների կարիքների գնահատումն ու ծառայության մատուցման վերաբերյալ հարցումը: Շարունակվել է նաև ՏՁԿ գրադարանի և էլեկտրոնային կայքի, ինչպես նաև մարզային ներկայացուցչությունների գրադարանների թարմացումը, համապատասխան նյութերի տարածումը և լրատվամիջոցների մոնիտորինգն ու կոռուպցիային վերաբերող նյութերի վերաբերյալ անոտացիաների տեղադրումը էլեկտրոնային կայքում:

2005թ. հունվար

Ծրագրերի աշխատակիցների կողմից մշակվել են հեռախոսային հարցման մեթոդաբանությունը, այդ թվում՝ ընտրանքը և հարցերը: Հեռախոսային հարցումը նպատակ ուներ պարզելու Աշտարակ, Գորիս, Վայք, Իջևան և Վանաձոր համայնքներում հանրային ծառայությունների մատուցման որակը և ըստ այդմ մոնիտորինգի ենթարկել նշված համայնքներում ամենից ավելի դժգոհության տեղիք տվող ծառայության մատուցումը: Անհրաժեշտ էր պարզել նաև մատուցվող ծառայությունների հարցերով քաղաքապետարան դիմելու հաճախականությունը, և այնտեղ քաղաքացիների դիմումի և հենց իրենց նկատմամբ դրսևորված վերաբերմունքը:

Հեռախոսային հարցումն իրականացվել է հունվարի 21-31-ը ՀՏԿ Աշտարակի, Գորիսի, Վայքի և Վանաձորի ներկայացուցիչների կողմից: Իջևանում հարցման ժամանակ ՀՏԿ ներկայացուցչի բացակայության պատճառով հարցումն իրականացրել է ՏՁԿ աշխատակիցը: Յուրաքանչյուր քաղաքում հարցմանը մասնակցել է 200-ական քաղաքացի, այսպիսով՝ ընդամենը մասնակցել է 1000 մարդ: Աշտարակում հարցումը կրկնվել է, քանի որ առաջինը արվել էր թերություններով: Աշտարակում, Իջևանում և Վայքում հարցվողները որպես հիմնախնդիր ներկայացրել են աղբահանությունը, Վանաձորում՝ ջրմուղ-կոյուղին, իսկ Գորիսում՝ առողջապահությունը, և վերջին երկու քաղաքում՝ աղբահանությունը որպես երկրորդ խնդիր: Մոնիտորինգային գործընթացի միասնականությունն ապահովելու համար մոնիտորինգի օբյեկտ է ընտրվել աղբահանության ծառայությունը:

2005թ. փետրվար

ՏՁԿ աշխատակիցների կողմից կատարվել է հեռախոսային հարցման արդյունքների վերլուծություն (տես Հավելված 2): Ինֆորմացիայի փոխանակման նպատակով հանդիպում է կայացել Տեղական ինքնակառավարման ծրագրի (Ուրբան ինստիտուտ/ԱՄՆ ՄԶԳ) աշխատակիցներ Ն.Կյուրինյանի և Լ.Հովհաննիսյանի հետ: Հանդիպմանը ներկայացվել են Ուրբան ինստիտուտի կողմից աղբահանության գծով Իջևանում և Վանաձորում կատարվող աշխատանքները: ՏՁԿ գրասենյակում կայացել է հանդիպում Իջևան քաղաքում աղբահանության բարելավման նպատակով մի շարք միջոցառումներ կազմակերպած «Բուրգ» ՀԿ նախագահ Ա. Վերմիշյանի հետ: Գերմանական «GTZ» կազմակերպության երևանյան գրասենյակի փորձագետ Ա.Մանուկյանի խորհրդով հանդիպում է կայացել ՀՀ քաղաքաշինության նախարարության Կոմունալ բաժնի պետ Ս. Սրապյանի հետ, որը ներկայացրել է աղբահանության գծով նախարարության կատարած աշխատանքները և «Արարատի և Վայոց Ձորի մարզերում կոշտ կենցաղային թափոնների կառավարման

ինտեգրացված ծրագրեր ստեղծելու ռազմավարական քաղաքականության խորհրդատվություն» և «Թափոնների կառավարման քաղաքականություն» ձեռնարկները:

ՀՏԿ՝ Աշտարակի, Գորիսի, Վայքի, Իջևանի և Վանաձորի ներկայացուցիչները զուգահեռաբար տեղեկատվություն են հավաքել իրենց համայնքներում իրականացվող աղբահանության վերաբերյալ (քաղաքապետարանների՝ աղբահանության համար պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների հեռախոսահամարները, համայնքների աղբահավաք կազմակերպության անվանումը, դրա աշխատակազմն ու տեխնիկայի քանակն ու վիճակը, աղբահավաք մեքենաների այցերի գրաֆիկը, ինչպես նաև բնակչությունից վարձավճարների հավաքագրման (ինչը կատարվում է կա՛մ քաղաքապետարանների կոմունալ բաժինների, և կա՛մ էլ աղբահավաք կազմակերպության կողմից) աստիճանը և աղբահավաք կազմակերպության մուտքերի և ծախսերի չափը): Տեղեկատվություն ստանալու նպատակը նաև այն հարցի պատասխանն էր, թե որքան թափանցիկ կարող են լինել նշված ծառայությունն իրականացնողներն ու պատասխանատուները, և ինչքանով է ծառայության որակը կախված բնակիչների վճարումներ չկատարելուց:

2005թ. մարտ

Մարտին ՀՏԿ ծրագրին զուգահեռ մեկնարկել է «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագիրը, որի մեջ ներառվել էին ՀՏԿ աշխատակիցների մեծ մասը: Նոր ծրագրի շրջանակներում մշակվել են մասնակցային մոնիտորինգի ցուցանիշները, ինչպես նաև մշակվել և փորձարկվել են ՀՏԿ մարզային ներկայացուցիչների կողմից անցկացվելիք հեռախոսային հարցման մեթոդաբանությունը, ընտրանքն ու հարցերը:

Մեկնարկած և ՀՏԿ ծրագրերի շրջանակներում մարզային ՀԿ-ների և ՁԼՄ-ների համար նախապատրաստվում էր սեմինար պարապմունք «Հասարակական մոնիտորինգ՝ տեսությունը և պրակտիկան» թեմայով, որը պետք է կայանար մարտի 21-ից 29-ը Աշտարակում, Վանաձորում և Գորիսում: Վատ եղանակի պատճառով սեմինարը հետաձգվել էր մինչև մայիս:

Աշտարակի, Իջևանի, Վանաձորի, Վայքի և Գորիսի քաղաքապետերին հղվել է նամակ ծրագրային աշխատանքների մեկնարկի մասին և նրանց ուղղված խնդրանքով՝ տրամադրել աղբահանության և սանմաքրման դիմաց քաղաքապետարանից տրամադրվող դոտացիաների, ամսական կտրվածքով կատարվող վճարումների չափի, ինչպես նաև աղբահանություն իրականացնող կազմակերպությունների ամսական ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:

2005թ. ապրիլ

Նոր ծրագրի շրջանակներում ՀՏԿ Աշտարակի, Իջևանի, Վայքի, Գորիսի և Վանաձորի ներկայացուցիչների կողմից իրենց համանքներում ապրիլի 3-15-ը իրականացվել է 200-ական հեռախոսային հարցում, որի նպատակն էր պարզել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի թափանցիկությունը և գնահատել հանրության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Հարցման միջոցով պետք է նաև պարզվեր, թե որքանով և որ աղբյուրներից է բնակչությունը տեղեկանում տեղական իշխանությունների որոշումներին, տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող հանրային լսումներին, և եթե ցածր է մարդկանց ակտիվությունը նշված հարցերում, ապա որոնք են դրա հիմնական պատճառները (հարցման արդյունքները տես Հավելված 3-ում):

Հարցմանը զուգահեռ ապրիլի 2-14-ը նշված քաղաքներում ՏՁԿ աշխատակիցների կողմից անցկացվել են ՏԻՄ-երի թափանցիկության և հանրային մասնակցության գնահատման ֆոկուսխմբային քննարկումներ: Վանաձորից բացի մնացած քաղաքներում անցկացվել են ակտիվ քաղաքացիների և ՀԿ-ների մեկական

ֆոկուսխմբային քննարկումներ: Վանաձորում աղբահանությունն իրականացրել են երեք կազմակերպություններ, հետևաբար անցկացվել են ՀԿ-ների մեկ և ակտիվ քաղաքացիների երեք ֆոկուսխմբային քննարկումներ: Քննարկումների մասնակիցների ցուցակները ներկայացված են Հավելված 4-ում:

Ֆոկուսխմբային քննարկումների նպատակն էր ներկայացնել հեռախոսային հարցման արդյունքները, այդ թվում հիշյալ քաղաքների բնակիչների կողմից աղբահանությունը որպես հիմնախնդիր առաջադրելը, պարզել դրանց առաջացման պատճառները և լուծման հնարավոր տարբերակները՝ որպես լուծման նախապայմաններ ընդունելով քաղաքացիների տեղեկացվածությունն ու ակտիվ լինելը: Պետք է նաև որոշվեր, թե ինչ չափանիշներով է հնարավոր իրականացնել աղբահանության մոնիտորինգը:

Միաժամանակ ՏԶԿ աշխատակիցները հանդիպումներ են ունեցել նշված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կոմունալ բաժինների պետերի և աղբահանություն իրականացնող կազմակերպությունների տնօրենների հետ՝ ներկայացնելու ծրագրի նպատակներն ու քննարկելու համագործակցության հեռանկարները:

2005թ. մայիս

Մայիսի 2-3-ը՝ Գորիսում (Գորիսի և Վայքի մասնակիցների համար), մայիսի 6-7-ը՝ Վանաձորում (Վանաձորի և Իջևանի մասնակիցների համար) և մայիսի 10-ին Աշտարակում տեղական ՀԿ-ների և լրագրողների մասնակցությամբ անցկացվել են սեմինար պարապմունքներ «Հասարակական մոնիտորինգ՝ տեսությունը և պրակտիկան» թեմայով (միջոցառման օրակարգը և մասնակիցների ցուցակը տես Հավելված 5-ում): Վերապատրաստման ընթացքում ձևավորվել են մոնիտորինգային խմբեր, որոնք ներկայացրել են մոնիտորինգի և այլ միջոցառումների իրականացման առաջարկներ և մշակել աշխատանքային ժամանակացույց: Դրանց հաջորդել է ՏԶԿ գրասենյակում վերջինիս աշխատակազմի և ՀՏԿ մարզային ներկայացուցիչների աշխատանքային հանդիպումը, որի ժամանակ քննարկվել է երկու ծրագրերի իրականացման համատեղ ժամանակացույցը և տրվել աշխատանքների մեկնարկը: Որոշում է կայացվել կատարել թվարկված աշխատանքները (կոնկրետ համայնքի անվան բացակայությունը նշանակում է, որ միջոցառումը պետք է անցկացվեր բոլոր հինգ համայնքներում):

1. Աղբահանության հարցերով «տեղեկատու հեռախոսի» անցկացում (շաբաթը 3 անգամ, օրը 2 ժամ)
2. «Մաքուր բակ» մրցույթի ֆոտոդիտարկումներ (երկու կամ երեք թաղամասում)
3. Աղբահավաք կազմակերպության եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ստացում
4. Աղբատարի այցերի գրաֆիկի ճշտում և դիտարկումներ
5. Աղբահանության վերաբերյալ ֆիլմի սցենարի մրցույթի անցկացում
6. Աղբահանության վերաբերյալ բուկլետի պատրաստում և տարածում
7. Մասնակցություն ավագանու նիստ(եր)ին
8. Հանրային լսումների կազմակերպում
9. ՁԼՄ-ների հետ համագործակցության (ուղիղ եթերների) կազմակերպում (բացառությամբ Աշտարակի և Վայքի, որտեղ չկան տեղական հեռուստաընկերություններ)
10. Շաբաթօրյակի կազմակերպում (Իջևան, Գորիս), հուշարձանների մաքրում (Աշտարակ, Գորիս)
11. Դպրոցական շարադրությունների մրցույթի անցկացում (Գորիս)
12. Գորիս-Վիեն համագործակցության ապահովում (Գորիս)
13. Դասընթացների կազմակերպում (մանկապարտեզում և տարրական դասարաններում՝ Իջևան):

Մայիսի վերջին կատարվել է պարտականությունների բաշխում մոնիտորինգի աշխատանքային խմբերի մասնակիցների միջև, բոլոր հինգ քաղաքներում զանգվածային լրատվամիջոցներով տրվել են «տեղեկատու հեռախոսի» և աղբահանության վերաբերյալ ֆիլմի սցենարի մրցույթի հայտարարություններ: Գորիսի դպրոցներում դրանից բացի հայտարարություն է տրվել շարադրությունների մրցույթի անցկացման մասին՝ վերջնաժամկետ սահմանելով մայիսի 21-ը: Գորիսում մայիսի 23-ին շաբաթօրյակ է կազմակերպվել հուշարձանների տարածքում, մայիսի 25-ին մեկնարկել է «Մաքուր բակ» մրցույթը՝ կատարվել է առաջին ֆոտոդիտարկումը: Վայքում առաջին ֆոտոդիտարկումը կատարվել է մայիսի 25-ին: ՀՏԿ Վանաձորի ներկայացուցիչն ու ՏՁԿ աշխատակիցը մայիսի 25-ին «Լոռի TV» և «Ինտերկապ» հեռուստաընկերությունների ղեկավարության հետ քննարկել են հայտարարությունների և ֆիլմի հեռարձակման հարցերը: Նույն օրը կատարվել է առաջին ֆոտոդիտարկումը: Աշտարակում առաջին ֆոտոդիտարկումը կատարվել է մայիսի 27-ին, իսկ Իջևանում՝ մայիսի 30-ին:

2005թ. հունիս

<u>**Աշտարակում**</u> շարունակվել են ֆոտոդիտարկումները: Յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին ժամը 11-14-ը անցկացվել է «տեղեկատու հեռախոս». ընդունվել է 5 զանգ: Քաղաքապետարանից ստացվել է մուտքերի և ծախսերի հաշվետվությունը: Ամսվա ընթացքում շարունակվել է «տեղեկատու հեռախոսի» և աղբահանության վերաբերյալ ֆիլմի սցենարի մրցույթի հայտարարությունների տպագրումը «Աշտարակ» թերթում: Ստացվել է նաև աղբատարի այցերի գրաֆիկը: ՏՁԿ գրասենյակ է ուղարկվել բուկլետի էսքիզի նախնական տարբերակը:

<u>**Վանաձորում**</u> գործել է «տեղեկատու հեռախոս» շաբաթական երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 16-18-ը. ընդունվել է 5 զանգ: Ամսվա ընթացքում տարածվել են հայտարարություններ տեղական հեռուստա- և ռադիոընկերություններով, տպագրվել են 4 ռեպորտաժներ «Վանատուր» թերթում: Իրականացվել են շաբաթական ֆոտոդիտարկումներ նախապես ընտրված թաղամասերում, ստացվել է ֆիլմի 3 սցենար:

<u>**Իջևանում**</u> հունիսի 8-ին «Հույսի կամուրջ» ՀԿ գրասենյակում ՏՁԿ աշխատակցի մասնակցությամբ կազմակերպվել է բանավեճ աղբահանության թեմայով, որին մասնակցել են կոմունալ բաժնի պետ Գ.Բլբուլյանը, «Բարդի» ՓԲԸ տնօրեն Ս.Չիբուխչյանը, ծրագրին մասնակից և այլ ՀԿ-ների ներկայացուցիչներ և ակտիվ երիտասարդ քաղաքացիներ, ինչպես նաև «Իջևան» ստուդիայի նկարահանող խումբը: Բանավեճը նկարահանվել և ցուցադրվել է տեղական հեռուստատեսությամբ: Հաջորդ օրը ՀՏԿ գրասենյակում տեղի է ունեցել ծրագրի մասնակից ՀԿ-ների և ակտիվ քաղաքացիների ժողով, որին քննարկվել են հունիս ամսվա ընթացքում կատարված աշխատանքները և հուլիս ամսվա ծրագրերը:

Հունիսի 9-ին հանդիպում է կայացել Գ.Բլբուլյանի և Ս.Չիբուխչյանի հետ, հստակեցվել են աղբատար մեքենաների այցերի գրաֆիկները: Հանդիպում է կայացել նաև քաղաքապետ Վ.Ներսիսյանի հետ: Քննարկվել են ծրագրին վերաբերող մի շարք հարցեր, այդ թվում՝ անցկացվելիք միջոցառումներին քաղաքապետի, կոմունալ բաժնի պետի և ՓԲԸ տնօրենի մասնակցության հարցը. քաղաքապետը համագործակցության պատրաստակամություն է հայտնել: Նույն օրը հանդիպում է կայացել «Իջևան» և «Տավուշ» թերթերի խմբագիրների հետ և ձեռք է բերվել պայմանավորվություն ծրագրի մասին պատմող նյութերը պարբերաբար տպագրելու մասին:

ՏՁԿ աշխատակցի հետ միասին կազմվել էր նաև «տեղեկատու հեռախոսի» անցկացման համար անհրաժեշտ տվյալների բազան: Քաղաքապետարանից ձեռք է

բերվել նաև քաղաքի քարտեզը, որի վրա քաղաքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների հետ համատեղ հստակեցվել են յուրաքանչյուր փողոցում աղբատար մեքենանայի այցերի օրը: Հունիսի 15-ին և 30-ին արվել են ֆոտոդիտարկումներ: Հունիսի 15-ին քաղաքապետարանի կողմից տրվել է մուտքերի և ծախսերի մասին տեղեկատվություն: Հունիսի 16-ին տեղի է ունեցել մասնակիցների աշխատանքային ժողովը, որի ժամանակ քննարկվել է «Մաքուր բակ» մրցույթի դիտարկումների մեխանիզմը: Հունիսի 17-ին և 30-ին արվել են «Մաքուր բակի» դիտարկումներ: Հունիսի 17-ին ՏԶԿ աշխատակիցների կողմից ՀՏԿ Իջևանի ներկայացուցչի խնդրանքով պատրաստվել է «Մաքուր բակ» մրցույթի դիտարկման թերթիկ, որն ուղարկվել է ՀՏԿ բոլոր ներկայացուցիչներին:

Հունիսի 22-ին քաղաքապետարանում տեղի է ունեցել ավագանու նիստ, որին մասնակցել են ՏԶԿ ներկայացուցիչը և ծրագրի մասնակիցները: Հունիս ամսվա ընթացքում յուրաքանրյուր շաբաթվա երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին ժամը 16-18-ը գործել է «տեղեկատու հեռախոս». ընդունվել է 12 զանգ: «Տեղեկատու հեռախոսի» զանգերը ակտիվացնելու նպատակով պատրաստվել են թռուցիկներ և ֆոտոդիտարկումների և «Մաքուր բակի» դիտարկումների ժամանակ բաժանվել բնակիչներին: Քաղաքացիներից ստացվել է ֆիլմի 2 սցենար: ՏԶԿ գրասենյակ է ուղարկվել բուկլետի էսքիզի նախնական տարբերակը:

<u>Վայքի</u> «Ասպեկտ» թերթում հունիսի 5-ին տպագրվել են «տեղեկատու հեռախոսի» և ֆիլմի սցենարի մրցույթի մասին հայտարարություններ: Քանի որ «տեղեկատու հեռախոսով» ողջ ամսվա ընթացքում ոչ մի զանգ չի եղել, դրանք խթանելու նպատակով որոշվել է դիտարկումների ընթացքում և դրանից հետո տեղեկատու թերթիկներ պատրաստել և բաժանել բնակիչներին: Հունիսի 30-ին արվել է «Մաքուր բակի» առաջին դիտարկումը և բաժանվել են «տեղեկատու խեռախոս»-ի թռուցիկներ: Հունիսի 15-ին և 30-ին իրականացվել են հերթական ֆոտոդիտարկումներ և «Մաքուր բակ» մրցույթի դիտարկումներ: Կայացել է աշխատանքային խմբի երկու հանդիպում:

Հունիսին ՀՏԿ ներկայացուցիչը խնդիր է ունեցել եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկություն ստանալու առումով. նա ապարդյուն փորձել է հանդիպել «Սանմաքրում» ՓԲԸ տնօրենին: Երբ հաջողվել է հանդիպել, վերջինս հրաժարվել է տրամադրել տեղեկությունները, պատճառաբանելով, որ դա կոմերցիոն գաղտնիք է: Ինչ վերաբերվում է աղբատար մեքենաների այցերի գրաֆիկին՝ խոստացել է տրամադրել, բայց դրժել է խոստումը, և այդ պատճառով աղբատար մեքենայի այցերի շաբաթական դիտարկումն իրականացվել է ինքնուրույն: Հունիսի 30-ին ՀՏԿ ներկայացուցիչը և ՏԶԿ աշխատակիցը հանդիպել են քաղաքապետի հետ, վերջինս խոստացել է, որ «Սանմաքրում և բարեկարգում» ՓԲԸ տնօրենը կտրամադրի բոլոր անհրաժեշտ տվյալները:

<u>Գորիսում</u> շաբաթը երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ, ժամը 16-18-ը գործել է «տեղեկատու հեռախոսը». ընդունվել է 5 զանգ: Վերջինիս աշխատանքները ակտիվացնելու համար որոշվել էր բնակիչներին բաժանել թերթիկներ, ինչպես նաև դրա և ֆիլմի սցենարի վերաբերյալ հայտարարություն հրապարակել տեղական «Լաստ» հեռուստաալիքով և «Ուսուցիչ» թերթում: Հունիսին «Մաքուր բակի» դիտարկում չէր արվել: Աղբատար մեքենաների գրաֆիկը ՓԲԸ-ի հետ ճշտված չէր և աղբատար մեքենայի այցերի մոնիտորինգ չէր արվել: Երկու անգամ իրականացվել է ֆոտոդիտարկում, սակայն ոչ ֆիքսված մասերում և միայն երեք հատվածում: 7-րդ և 9-րդ դասարանների աշակերտների շրջանում անցկացվել է «Մաքուր Գորիս» շարադրությունների մրցույթ:

2005թ. հուլիս

<u>Աշտարակում</u> գործել է «տեղեկատու հեռախոս» շաբաթական երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 11-14-ը. զանգեր չեն եղել: Հուլիսի 7-8-ը ՀՏԿ ներկայացուցիչը Երևանում մասնակցել է ՏՁԿ կողմից կազմակերպված «Լեհաստանի փորձը կոռուպցիայի դեմ պայքարում» սեմինարին (միջոցառման օրակարգը և մասնակիցների ցուցակը տես Հավելված 6-ում): Աշտարակի քաղաքապետարանից ստացվել է հունիս ամսվա մուտքերի և ծախսերի տեղեկատվությունը: Հուլիսի 15-ին և 30-ին արվել են ֆոտոդիտարկումներ, իրականացվել է նաև աղբատար մեքենայի այցերի դիտարկում: Հուլիսի 26-ին կայացել աշխատանքային խմբի հանդիպում:

<u>Վանաձորում</u> հուլիսին գործել է «տեղեկատու հեռախոս» շաբաթական երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ, ժամը 16-18-ը. ընդունվել է 12 զանգ: Հուլիսի 7-8-ը ՀՏԿ ներկայացուցիչը Երևանում մասնակցել է ՏՁԿ կողմից կազմակերպված «Լեհաստանի փորձը կոռուպցիայի դեմ պայքարում» սեմինարին: «Մաքուր բակ» մրցույթի և «տեղեկատու հեռախոսի» մասին հայտարարություններ են տպագրվել «Վանատուր» և «Վանաձորյան խճանկար» թերթերում: Կատարվել են շաբաթական ֆոտոդիտարկումներ: Աշխատանքային խմբի անդամներ Լ.Սարգսյանի («Լոռի TV» հեռուստաընկերության լրագրող) և Ա.Մատինյանի նախաձեռնությամբ արվել է մեկ տեսադիտարկում: Ամսվա ընթացքում ստացվել է «Մաքուր բակ» մրցույթի 3 հայտ: Հուլիսի 15-ից իրականացվել է աղբատար մեքենաների այցերի դիտարկում քաղաքի 9 կետերում: Տպագրվել է երեք ֆոտոռեպորտաժ «Վանատուր» շաբաթաթերթում:

Հանրային լսում անցկացնելու հարցով բանակցություններ են տարվել Վանաձորի քաղաքապետարանի հետ: Հուլիսի 1-ին աշխատանքային խմբի անդամները մասնակցել են ավագանու նիստին, արձանագրություն ստանալու համար քաղաքապետարան է ներկայացվել համապատասխան գրություն: Հուլիսի 13-ին քաղաքապետարանը հունվար–հունիս ամիսների մուտքերի և ծախսերի մասին տեղեկություն է ուղարկել ՏՁԿ գրասենյակ:

<u>Իջևանում</u> հուլիսի 5-ին տեղի է ունեցել աշխատանքային խմբի անդամների հանդիպում: Հուլիսի 7-8-ը ՀՏԿ ներկայացուցիչը մասնակցել է «Լեհաստանի փորձը կոռուպցիայի դեմ պայքարում» սեմինարին: Հուլիսին գործել է «տեղեկատու հեռախոս» շաբաթական երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 16-18-ը. ընդունվել է 5 զանգ: Հուլիսի 15-ին և 30-ին արվել են ֆոտոդիտարկումներ և «Մաքուր բակ» մրցույթի դիտարկումներ: Հուլիս ամսից իրականացվել է աղբատար մեքենաների այցերի դիտարկում քաղաքի 4 փողոցներում:

Հուլիսի 14-ին «Կանաչ Տավուշ» ՀԿ–ի կողմից կազմակերպված բակային ճամբարում անցկացվել է «Բնահամակարգ» թեմայով դասընթաց: Հուլիսի 20-ին «Հույսի կամուրջ» ՀԿ-ում անցկացվել է «ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության խթանումը» թեմայով բանավեճ, որին մասնակցել են աշխատանքային խմբի անդամները, ՀԿ ներկայացուցիչներ և քաղաքի ակտիվ երիտասարդությունը: Հուլիսի 26-ին «Տուրիզմի և բիզնեսի տեղեկատվական կենտրոնում» կազմակերպվել է «ՀԿ-ների գործունեությունը և դերը» թեմայով բանավեճ: Այն ցուցադրվել է տեղական հեռուստատեսությամբ, հոդվածներ և լուսանկարներ են տպագրվել «Տավուշ» և «Իջևան» թերթերում:

Հուլիսի 28-ին քաղաքապետարանի դահլիճում կազմակերպվել է «Քաղաքի մաքրությունը և աղբահանությունը» թեմայով հանրային լսում, որին մասնակցել է շուրջ 40 մարդ, այդ թվում քաղաքապետը, կոմունալ տնտեսության բաժնի պետը, «Բարդի» ՓԲԸ տեսուչը, Տավուշի տարածքային բնապահպանության տեսչության տեսուչը, Իջևանի համաճարակային կենտրոնի բժիշկը և ՏՁԿ աշխատակիցը:

Վայքում «տեղեկատու հեռախոսով» զանգեր չեն եղել: Բնակիչներին բաժանվել են «տեղեկատու հեռախոսի» վերաբերյալ թերթիկներ: Հուլիսի 7-8-ը ՀՏԿ ներկայացուցիչը մասնակցել է «Լեհաստանի փորձը կոռուպցիայի դեմ պայքարում» սեմինարին: Հուլիսի 15-ին և 31-ին կատարվել է ֆոտոդիտարկում, իրականացվել է նաև աղբատար մեքենայի այցերի ամենշաբաթյա դիտարկում: «Մաքուր բակ» մրցույթի դիտարկումներ են արվել հուլիսի 15-ին և 31-ին: Հուլիսի 25-ին քաղաքապետարանին գրություն է ներկայացվել ավագանու նիստի մասնակցելու խնդրանքով: Քաղաքի ուսանող երիտասարդության հետ կազմակերպվել է հավաք: Հուլիսի 29-ին անցկացվել է հանրային լսում՝ նվիրված աղբահանության խնդիրներին, հրավիրված 45 քաղաքացիներից մասնակցել է 16-ը, այդ թվում ՏՁԿ աշխատակիցը: Հանրային քննարկումից հետո «Սանմաքրում և բարեկարգում» ՓԲԸ տնօրենը բանավոր ներկայացրել է եկամուտների և ծախսերի մոտավոր տվյալները:

Գորիսում գործել է «տեղեկատու հեռախոսը» շաբաթական երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ, ժամը 16-18-ը. ընդունվել է 7 զանգ: Հուլիսի 7-8-ը ՀՏԿ ներկայացուցիչը մասնակցել է «Լեհաստանի փորձը կոռուպցիայի դեմ պայքարում» սեմինարին: Հուլիսի 21-ին կայացել է հանդիպում Գորիս–Վիեն (Ֆրանսիա) համագործակցության շրջանակներում և ձեռք է բերվել հետագա համագործակցության նախնական պայմանավորվածություն:

Հուլիսին կատարվել է երկու ֆոտոդիտարկում, ամփոփվել է «Մաքուր Գորիս» շարադրությունների մրցույթը, մրցանակներ են տրվել վեց լավագույն աշխատանքների համար, դրանց սեղմագրերը տպագրվել են «Ուսուցիչ» թերթում: Հուլիսի 19-ին աշխատանքային խմբի անդամները մասնակցել են ավագանու նիստին: Քննարկվել են աղբահանության հետ կապված մի շարք խնդիրներ, այդ թվում հանրային լսում անցկացնելու հարցը:

Կատարվել է աղբատարի այցերի գրաֆիկի ճշտում և իրականացվել է աղբատարի շաբաթական այցերի դիտարկում: Հուլիսի 15-ին և 30-ին արվել են «Մաքուր բակ» մրցույթի դիտարկումներ: Քաղաքի 4 թաղամասում ծրագրի մասնակիցները գրանցել են աղբահանության վերաբերյալ բնակիչների խնդիրները: Մուտքերի և ծախսերի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով ՀՏԿ ներկայացուցիչը մի քանի անգամ դիմել է քաղաքապետարան. այնտեղ չեն մերժել, սակայն տեղեկություն չեն տրամադրել: ՏՁԿ գրասենյակ է ուղարկվել բուկլետի էսքիզի նախնական տարբերակը:

2005թ. օգոստոս

ՏՁԿ ծրագրային՝ աղբահանության վերաբերյալ ֆիլմի նկարահանման համար բոլոր հինգ քաղաքներում հայտարարված ֆիլմի սցենարի մրցույթին ՏՁԿ գրասենյակը ստացել էր երկուական նախագիծ Վանաձորից և Իջևանից: Սակայն այդ սցենարները չէին ընդունվել և գրասենյակը սցենար գրելու և ֆիլմ նկարահանելու առաջարկով դիմել էր “Վերսուս” ստուդիային:

Աշտարակում «տեղեկատու հեռախոսով» ընդունվել է 2 զանգ: Իրականացվել է երկու ֆոտոդիտարկում՝ օգոստոսի 18-ին և 28-ին: Քաղաքապետարանից ստացվել է «Աշտարակի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ին տրված դոտացիայի մասին տեղեկատվություն:

Կազմակերպվել է հանդիպում «Երիտասարդների և կանանց «Զարթոնք» խորհրդատվական կենտրոնի» հետ. քննարկվել է երիտասարդության միջազգային օրը Քասախի կիրճը մաքրելու հարցը, ինչը երիտասարդների ուժերով կատարվել է օգոստոսի 12-ին: Օգոստոսին «Կանթեղ» թերթում հրապարակվել է հոդված քաղաքի աղբահանության վիճակի մասին:

Շինվերանորոգման աշխատանքների դիտարկման նպատակով նամակներ են առաքվել «Արմենտել» ՀՁ ՓԲԸ Աշտարակի բաժանմունքի պետ Գ.Մելիքյանին և

Արագածոտնի ԳԳՄ տնօրեն Ռ.Հայրապետյանին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել փողոցների վրա աշխատանքներ կատարելուց հետո դրանք բարեկարգելու պատասխանատուների, ժամկետների և ֆինանսական աղբյուրների մասին: Պատասխան նամակ էր ստացվել միայն Գ.Մելիքյանից, որը խորհուրդ էր տվել հարցն ուղղել ՓԲԸ գործադիր մարմնին, ինչը և կատարվել էր, սակայն պատասխան չէր ստացվել:

Ավագանու նիստին մասնակցելու համար ավագանու անդամ Ա.Ազիզյանից ՀՏԿ ներկայացուցիչը փորձել էր ճշտել ավագանու նիստերի գրաֆիկը և պարզել էր, որ դրանք կայացել են «թղթի վրա»:

<u>**Վանաձորում**</u> «տեղեկատու հեռախոսով» ընդունվել է 6 զանգ. ներկայացված հարցերը լուսաբանվել են «ԼոռիTV» հեռուստատեսությամբ և «Վանատուր» շաբաթաթերթում աշխատանքային խմբի անդամների կողմից: Քաղաքի բոլոր թերթերում տեղադրվել է հանրային լսում անցկացնելու մասին հայտարարություն. այն կայացել է օգոստոսի 26-ին քաղաքապետարանի դահլիճում, որին մասնակցել են քաղաքապետը, փոխքաղաքապետը, քաղաքապետարանի գրեթե բոլոր բաժնի վարիչները և թվով մոտ 70 քաղաքացիներ: Նույն օրը աշխատանքային խմբի անդամները մասնակցել են նաև ավագանու հերթական նիստին: Հանրային լսմանը և ավագանու նիստին մասնակցել է ՏԶԿ աշխատակիցը:

Օգոստոսին արվել են շաբաթական ֆոտոդիտարկումներ: Աշխատանքային խմբի չորս անդամներ իրականացրել են տեսադիտարկումներ քաղաքի տարբեր թաղամասերում: «Մաքուր բակ» մրցույթի շրջանակներում դիտարկվել է 3 բակ, կատարվել է աղբատար մեքենաների այցերի դիտարկում:

«Վանատուր» մարզային շաբաթաթերթով շարունակվել է ռեպորտաժների շարքը: Ինֆորմացիոն նյութ է տպագրվել «Լոռու մարզ», ռեպորտաժ՝ «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթերում: Ռեպորտաժներ են հեռարձակել «ՄԻԳ» մեդիա հոլդինգը» և «ԼոռիTV» հեռուստաընկերությունը:

<u>**Իջևանում**</u> «տեղեկատու հեռախոսով» ընդունվել է 6 զանգ: Օգոստոսի 3-ին և 25-ին տեղի են ունեցել հանդիպումներ աշխատանքային խմբի անդամների հետ. երկրորդ քննարկմանը մասնակցել է ՏԶԿ աշխատակիցը: Օգոստոսի 15-ին և 30-ին իրականացվել է ֆոտոդիտարկում: «Մաքուր բակ» մրցույթի դիտարկումներ են իրականացվել օգոստոսի 15-ին և 30-ին, կատարվել է նաև աղբատար մեքենայի այցերի շաբաթական դիտարկում:

«Հույսի կամուրջ» ՀԿ-ում օգոստոսի 10-ին կազմակերպվել է «ՀՀ կառավարության կողմից ընդունված Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագրի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման խթանումը» թեմայով բանավեճը, որին մասնակցել է 20 մարդ, այդ թվում աշխատանքային խմբի անդամներ, քաղաքապետարանի, ՀԿ-ների ներկայացուցիչներ, երիտասարդներ և լրագրողներ: Տեղեկատվությունը և լուսանկարները տրամադրվել են «Տավուշ» և «Իջևան» թերթերին: Օգոստոսի 18-ին քաղաքապետարանի կողմից ներկայացվել են մուտքերի և ծախսերի վերաբերյալ տեղեկություններ:

<u>**Վայքում**</u> «տեղեկատու հեռախոսով» զանգեր չեն եղել: Օգոստոսի 15-ին և 31-ին իրականացվել է ֆոտոդիտարկում, ինչպես նաև աղբատար մեքենայի այցերի շաբաթական դիտարկում: Ամսի 15-ին և 31-ին կատարվել է քաղաքի 27 բազմաբնակարան շենքերի բակերի «Մաքուր բակ» մրցույթի դիտարկում: «Մաքուր բակի» դիտարկումների ընթացքում բնակիչներին բաժանվել են «տեղեկատու հեռախոսի» վերաբերյալ թերթիկներ: Հրապարակումներ չեն եղել, քանի որ «Ասպեկտ» թերթը գտնվել է արձակուրդում: Օգոստոսին պլանավորված ավագանու նիստը չի կայացել:

Գորիսում «տեղեկատու հեռախոսով» ընդունվել է 3 զանգ: Օգոստոսի 15-ին և 30-ին կատարվել է ֆոտոդիտարկում: Օգոստոսին կատարվել է «Մաքուր բակ» մրցույթի երկու դիտարկում, իրականացվել է նաև աղբատար մեքենայի այցերի շաբաթական դիտարկում: «Ազգ» օրաթերթում տպագրվել է տեղական ՀԿ-ների՝ «Մաքուր Գորիս» համագործակցության (սկիզբ էր առել ՏԶԿ նշված երկրորդ ծրագրի շրջանակներում) վերաբերյալ հոդված: «Գորիս-Վիեն» համագործակցության շրջանակներում Վիենի պատվիրակության այցից հետո ստացվել է նամակ, որում առաջարկվել է շարունակել «Մաքուր Գորիս» ծրագիրը, և ներկայացնել 2005-06թ. բյուջեն:

2005թ. սեպտեմբեր

Շարունակվել է աղբահանության վերաբերյալ ֆիլմի նկարահանման աշխատանքը "Վերսուս" ստուդիայում: Միաժամանակ, ՏԶԿ գրասենյակի կողմից տպագրության է ներկայացվել «Մաքուր պահենք մեր քաղաքը» բուկլետը, որի մեջ ներառվել են հինգ համայնքներում անցկացված հարցման տվյալները քաղաքապետարանների կողմից իրականացվող ծառայությունների որակի վերաբերյալ, այդ քաղաքապետարանների՝ աղբահանության գծով պատասխանատու ստորաբաժանումների, աղբահանություն իրականացնող կազմակերպությունների տվյալները, ինչպես նաև ծառայության սակագներն ըստ քաղաքների ու նրանցում գործող տեղեկատու հեռախոսահամարները (տես Հավելված 7): Բուկլետը տպագրվել է 2500 օրինակ տպաքանակով "Անտարես" դիզայներական գործակալության կողմից և 500-ական օրինակով բաժանվել է ՀՏԿ ներկայացուցիչներին բնակիչների շրջանում անվճար տարածելու համար:

Որոշում է կայացվել ՀՏԿ շրջանակներում անցկացնել ՏԻՄ-երի ընտրությունների մոնիտորինգ Վանաձոր քաղաքում: ՏԶԿ գրասենյակում մշակվել է մոնիտորինգի մեթոդաբանությունը, ստեղծվել է մոնիտորինգի խումբ և կազմակերպվել է խմբի անդամների վերապատրաստում:

Աշտարակում ՀՏԿ ներկայացուցիչը «Աշտարակի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ից ստացել էր օգոստոս-սեպտեմբերի ֆինանսական մուտքերի և ծախսերի տեղեկատվությունը: Ստացվել է Արագածոտնի ԳԳՄ տնօրեն Ռ.Հայրապետյանին ուղարկված նամակի պատասխանը: Բնակիչների շրջանում տարածվել է «Մաքուր պահենք մեր քաղաքը» բուկլետը:

Դիտարկվել է երեք թաղամաս, որտեղ հիմնականում կուտակվում է աղբը. կատարվել է 2 ֆոտոդիտարկում: Ֆոտոդիտարկումների արդյունքում պարզվել է, որ աղբահանությունը կատարվում է ոչ հստակ գրաֆիկով, նախընտրական շրջանում մաքրվում են քաղաքի կենտրոնական փողոցներն ու աղբարկղերը, իսկ հեռավոր թաղամասերը մնում են: Չեն մաքրվում նաև աղբարկղերին հարող տարածքները:

Վանաձորում գործել է «տեղեկատու հեռախոսը». ընդունվել է 3 զանգ. ներկայացվել է աղբահանության կոնկրետ հարց, որի մասին տեղեկացվել են աշխատանքային խումբը և ծառայություն իրականացնողները: Քաղաքի վեց թաղամասերում անց են կացրել ֆոտոդիտարկումներ: Շարունակվել է «Մաքուր բակ» մրցույթի շրջանակներում բակերի դիտարկումը. դիտարկվել են մրցույթի ներկայացված երեք բակեր: Իրականացվել է աղբատարների այցերի դիտարկում՝ ութ թաղամասերում դիտարկվել են ինը կետեր: Բնակիչների շրջանում տարածվել է «Մաքուր պահենք մեր քաղաքը» բուկլետը: «Վանատուր» և «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթերում հրապարակվել են հայտարարություն, ռեպորտաժներ, տեղեկատվական նյութ ծրագրերի ընթացքի մասին:

ՀՏԿ ներկայացուցչությունում կազմավորվել է ակտիվ վանաձորցիների խումբ ՏԶԿ մոնիտորինգային խմբի հետ մեկտեղ քաղաքապետի ընտրությունների և դրան նախորդած քարոզարշավի մոնիտորինգ իրականացնելու համար:

Իջևանում կատարվել է 2 ֆոտոդիտարկում, իրականացվել է «Մաքուր բակ» մրցույթի դիտարկում, բնակիչների շրջանում տարածվել են «Մաքուր պահենք մեր քաղաքը» բուկլետը: Իրականացվել է աղբատար մեքենայի այցելությունների շաբաթական մոնիտորինգ, ստացվել է մուտքերի և ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն: Սեպտեմբերի 7-ին կազմակերպվել է երիտասարդական բանավեճ: Սեպտեմբերի 28-ին կազմակերպվել է շարադրությունների մրցույթ, իսկ 30-ին՝ դասընթաց տարական դասարաններում: Սեպտեմբերի 19-ին քաղաքապետարանը տրամադրել է մուտքերի և ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:

Վայքում սեպտեմբերի 15-ին և 30-ին կատարվել է 3 կետերում աղտոտվածության վիճակի ֆոտոդիտարկում: Իրականացվել է աղբատար մեքենայի այցերի մոնիտորինգ՝ 4 անգամ՝ յուրաքանչյուր շաբաթվա վերջում՝ 4 թաղամասերի բնակիչների հեռախոսային հարցման միջոցով: «Մաքուր բակ» մրցույթով սեպտեմբերի 15-ին և 30-ին կատարվել է Վայք քաղաքի 27 բազմաբնակարան շենքերի բակերի դիտարկումը: «Մաքուր բակի» դիտարկումների ժամանակ բազմաբնակարան շենքերի բնակիչների շրջանում բաժանվել է «Մաքուր պահենք մեր քաղաքը» բուկլետը:

Գորիսում գործել է «տեղեկատու հեռախոսը». ընդունվել է 7 զանգ: Նախապես ընտրված վեց թաղամասում կատարվել է 2 ֆոտոդիտարկում: Կազմակերպվել է մեկ հանրային լսում, որին մասնակցել է նաև ՏՁԿ աշխատակիցը: Տեղի է ունեցել հանդիպում ՁԼՄ-ի ներկայացուցչի հետ: «Մաքուր բակ» մրցույթով կատարվել է 2 դիտարկում: Շարունակվել է աղբատարի գրաֆիկի շաբաթական դիտարկումը, որը կատարվել է բնակիչների մասնակցությամբ:

2005թ. հոկտեմբեր

Իջևանում ՀՏԿ Տավուշի ներկայացուցչի նախաձեռնությամբ և քաղաքապետարանի կոմունալ տնտեսության ու քաղաքում աղբահանություն իրականացնող «Բարդի» ՓԲԸ օժանդակությամբ կազմակերպվել է համաքաղաքային շաբաթօրյակ, որին մասնակցել է շուրջ 2500 մարդ:

Վանաձորում իրականացվել է քաղաքապետի ընտրությունների և դրան նախորդած քարոզարշավի մոնիտորինգ:

ՏՁԿ գրասենյակում կատարվել է Վանաձորի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգի ամփոփումը և արդյունքների հրապարակումը (տես Հավելված 8): “Վերսուս” ստուդիան ավարտել և ՏՁԿ է ներկայացրել աղբահանությանը վերաբերող ֆիլմը, և այն անվճար ցուցադրելու խնդրանքով ՏՁԿ գրասենյակը դիմել էր Հանրային հեռուստատեսություն, “Հանրային 2-րդ ալիք”, “Շանթ”, “Երկիր Մեդիա” և “Շողակաթ” հեռուստաընկերություններին: «Երկիր Մեդիան» սկսել էր ֆիլմի ցուցադրումը հոկտեմբերի 17-ից՝ հեռարձակելով այն օրը 1 անգամ, «Շողակաթը» հեռարձակել էր ֆիլմը հոկտեմբերի 7-ից 30-ը՝ օրը 2 անգամ: «Հանրային 2-րդ ալիքը» համաձայնվել էր հեռարձակել ֆիլմը միայն վճարովի հիմունքներով, իսկ «Կենտրոնը» ընդհանրապես հրաժարվել էր ցուցադրելուց:

Բոլոր հինգ համայնքներում ամփոփվել են ծրագրային գործողությունները, այդ թվում ընտրվել են «Մաքուր բակ» մրցույթը շահողները: *Վայքում* «Մաքուր բակի» դիտարկումների արդյունքում հաղթող է ճանաչվել **«Շահումյան 4»** հասցեով բակը, *Գորիսում* **«Նարեկացի 13»** հասցեով բակը, *Իջևանում* **«Անկախության»** հասցեով բակը, *Վանաձորում* **«Սուխումի 12»** հասցեով բակը: Աշտարակում «Մաքուր բակ» մրցույթի դիտարկման արդյունքում հնարավոր չի եղել որոշելու շահողին և այդ

պատճառով որոշում է ընդունվել որպես խրախուսական մրցանակ աղբաման տեղադրել քաղաքապետարանի բակում:

2005թ. նոյեմբեր

«Երկիր Մեդիան» շարունակել էր հեռարձակել աղբահանությանը վերաբերող ֆիլմը մինչև նոյեմբերի 30-ը, «Հանրային հեռուստատեսությունը» ցուցադրել էր ֆիլմը նոյեմբերի 1-ից 15-ը՝ օրը 2-3 անգամ, «Շանթը» օրը 2 անգամ հեռարձակել էր այն նոյեմբերի 8-ից դեկտեմբերի 8-ը:

Նոյեմբերին ՀՏԿ երեք ներկայացուցիչներ (Գևորգ Եղիազարյան՝ ք. Աշտարակ, Արման Գևորգյան՝ ք. Իջևան, Արտաշես Տոռոզյան՝ ք. Գորիս) Մեծ Բրիտանիայի արտաքին և համագործակցության երկրների նախարարության Եվրոպայի վերամիավորում ծրագրի Գլոբալ հնարավորությունների հիմնադրամի միջոցով Լեհաստանում և Հայաստանում Բրիտանական դեսպանատների կողմից ֆինասավորված “Ոչ կոռուպցիային. Տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիական վերահսկողություն” ծրագրի շրջանակներում մասնակցել են Լեհաստան կատարած ուսուցողական այցին:

Նոյեմբերին ՀՏԿ բոլոր ներկայացուցիչների կողմից կատարվել են «Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի ավարտական շնորհանդեսներ, ծրագրերին մասնակցելու հավաստագրեր և մրցանակներ են տրվել ակտիվ մասնակիցներին (օրակարգը, մասնակիցների ցուցակները և հավաստագրի նմուշը տես Հավելված 9-ում): Ավարտական շնորհանդեսներին ներկայացվել է նաև Վանաձորի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգի վերաբերյալ հրապարակումը:

Եզրակացություններ

«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի ընթացքը ցույց է տվել, որ ցածր է մարզերի բնակիչների տեղեկացվածությունը ՏԻՄ-երի ամենօրյա գործունեության վերաբերյալ, ինչպես նաև նրանց մասնակցությունը ավագանու նիստերին: Միաժամանակ, ՏԻՄ-երի գործունեությունը իրականում թափանցիկ չէ, և շատ դեպքերում ավագանու նիստեր չեն կազմակերպվում՝ դրանք անցկացվում են հիմնականում «թղթի վրա»: Համայնքների բնակչությունը մեծ մասամբ ընդգրկված չէ նաև ՏԻՄ-երի կողմից կազմակերպվող հանրային լսումներին, որոնք ընդհանրապես հազվադեպ են անցկացվում:

Ցածր է տեղեկացվածությունը նաև հանրային ծառայությունների մատուցման գործընթացի վերաբերյալ (ծառայություններ իրականացնողների և պատասխանատուների տարբերակումը, սակագների չափերի իմացությունը) և շահագրռվածությունը մասնակցելու ծառայության մատուցման մոնիտորինգին և բարելավման ուղիների որոնմանը: Չմասնակցելուն նպաստում է նաև ծառայություն ստացողների հիմնական զանգվածի նյութական անապահով վիճակը, երբ ծառայության դիմաց չվճարելը ստիպում է բնակիչներին խուսափել իրականացնողների հետ ընդհանրապես որևէ շփումից: Բյուջետային սակավ դոտացիաների հետ մեկտեղ ծառայություն ստացողների չվճարումներն, իրենց հերթին, հանգեցնում են մատուցողների մոտ ֆինանսական խնդիրների առաջացմանը, որը դրսևորվում է, օրինակ, նոր տեխնիկայի ձեռքբերման համար միջոցների անբավարարությամբ, ինչ էլ, իր հերթին, բացասաբար է ազդում հենց նույն ծառայության մատուցման որակի վրա: Դրան ավելանում է նաև ծառայություն մատուցողների գործունեության թերի կառավարումը:

Չափազանց անբավարար մակարդակի վրա է բնակիչների շրջանում հանրային սեփականության գիտակցումը. դա երևան է եկել հատկապես «Մաքուր բակ» մրցույթի դիտարկումների ընթացքում, երբ աղբը տնից դուրս թափվում էր ուր պատահի: Չափազանց թույլ է նաև սեփական խնդիրների լուծման ուղղությամբ կոլեկտիվ գործողությունների դիմելու պրակտիկան:

Վերընշված հիմնախնդիրները դժվար է ամբողջապես լուծել մեկ հասարակական կազմակերպության, կամ մեկ համայնքի ուժերով. պահանջվում է պետական մոտեցում և համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսների ներդրում: Մեկ համայնքը կարող է նպաստել ծառայությունների մատուցման բարելավմանը, իսկ մեկ հասարակական կազմակերպությունն ի զուրու է բնակիչների շրջանում ակտիվ քարոզչական աշխատանքի շնորհիվ հասնել, օրինակ, վարձավճարների հավաքագրման որոշակի մակարդակի ապահովմանը:

Իրականացված ծրագրերի ընթացքում հաջողվել է բարձրացնել բնակիչների տեղեկատվության աստիճանը՝ շուրջ մեկուկես հազար մարդ դիմել է ՀՏԿ մարզային ներկայացուցիչներին գրականությունից օգտվելու, համայնքային հնչեղության կոնկրետ խնդիր ներկայացնելու և խորհրդատվություն ստանալու նպատակով: Աղբահանության վերաբերյալ «տեղեկատու հեռախոսով» զանգահարել է շուրջ 150 մարդ: Բնակիչների իրազեկությունը բարձրացնելու նպատակով նրանց բաժանվել է աղբահանության վերաբերյալ բուկլետներ: Նախաձեռնվել է «Ապրենք մաքուր» ֆիլմի նկարահանումը, որը հեռարձակվել է երեք հեռուստաընկերություններով:

Համայնքներում ՀՏԿ ներկայացուցիչների անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվել են շաբաթօրյակներ: Աշտարակ, Վանաձոր, Իջևան, Վայք և Գորիս համայքների մի շարք բակերի բնակիչներ 3-4 ամիս մասնակցել են «Մաքուր բակ» մրցույթին՝ այսինքն այդքան ժամանակ փորձելով մաքուր պահել այն տարածքը, որտեղ ապրում են իրենք:

Աղբահանություն իրականացնող թե՛ մասնավոր, և թե՛ համայնքային կազմակերպությունները համագործակցեցին տեղական ՀԿ-ների հետ՝ տրամադրելով նրանց հաշվետվություն գործունեության (մուտքեր և ծախսեր, տեխնիկայի առկայություն, աղբատարների այցերի ժամանակացույց և այլն) վերաբերյալ:

Եվ վերջապես, ՏԻՄ-երի ղեկավարությունն ընդառաջեց տեղական ՀԿ-ների կողմից ավագանու նիստերի և հանրային լսումների կազմակերպման ու անցկացման առաջարկին: Համագործակցությունը ՏԻՄ-երի հետ նպաստել է ավագանու նիստերի կամ հանրային լսումների ավելի հաճախակի անցկացմանը և նման գործողությունների նկատմամբ հանրային պահանջարկի ձևավորմանը: Հայաստանյան հինգ համայնքներում ձևավորվել են կոլեկտիվ գործողությունների ունակ և պատրաստ համախոհների խմբեր: Խմբերն անցել են վերապատրաստում և համապատասխան փորձ ձեռք բերելով՝ կարող են այս ծրագրերի ավարտից հետո իրականացնել հանրային ամենատարբեր ծառայությունների կամ ՏԻՄ-երի գործառնությունների մոնիտորինգ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

“Հասարակական մոնիտորինգ. տեսությունը և պրակտիկան” ՀԿ-ների, լրագրողների և ակտիվ քաղաքացիների վերապատրաստում

Դասընթացներ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի ներկայացուցիչների համար
ք.Գորիս, մայիսի 2, 2005թ.

Դասընթացներ Լոռու և Տավուշի մարզերի ներկայացուցիչների համար
ք.Վանաձոր, մայիսի 6, 2005թ.

Դասընթացներ Արագածոտնի մարզի ներկայացուցիչների համար
ք.Աշտարակ, մայիսի 10, 2005թ.

Ֆոտոդիտարկումներ

ք.Վայք, օգոստոսի 15, 2005թ.

ք.Վայք, սեպտեմբերի 30, 2005թ.

ք.Գորիս, սեպտեմբերի 15, 2005թ.

ք.Գորիս, օգոստոսի 15, 2005թ.

ք.Աշտարակ, հուլիսի 18, 2005թ.

ք.Աշտարակ , հուլիսի 28, 2005թ.

ք.Իջևան, օգոստոսի 30, 2005թ.

ք.Իջևան, սեպտեմբերի 15, 2005թ.

ք.Վանաձոր, հունիսի 18, 2005թ.

ք.Վանաձոր, հուլիսի 23, 2005թ.

Հանրային լսում, ք.Իջևան, Տավուշի մարզ, օգոստոսի 26, 2005թ.

«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի ամփոփում

ք.Վանաձոր, նոյեմբերի 5, 2005թ.

ք.Գորիս, նոյեմբերի 8, 2005թ.

ք.Վայք, նոյեմբերի 9, 2005թ.

ք.Իջևան, նոյեմբերի 11, 2005թ.

ք.Աշտարակ, նոյեմբերի 11, 2005թ.

«Մաքուր բակ» մրցույթի դիտարկման արդյունքում հնարավոր չի եղել որոշելու շահողին և այդ պատճառով որոշում է ընդունվել որպես խրախուսական մրցանակ աղբաման տեղադրել Աշտարակի քաղաքապետարանի բակում

Հավելված 2

Հանրային ծառայությունների վերաբերյալ հեռախոսային հարցում

«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» ծրագրի շրջանակներում Աշտարակի, Գորիսի, Վայքի, Իջևանի և Վանաձորի ներկայացուցիչների կողմից իրենց համայնքներում 2005թ. փետրվարին իրականացվել են 200-ական հեռախոսային հարցումներ: Հարցումը նպատակ ուներ պարզելու հանրային ծառայությունների իրականացման որակը և ըստ այդմ, տվյալ համայնքներում ամենից ավելի դժգոհության տեղիք տվող ծառայության իրականացումը ենթարկելու մոնիտորինգի: Խնդիր էր դրվել նաև ուսումնասիրելու մատուցվող ծառայությունների առնչությամբ քաղաքապետարան դիմելը և այնտեղ նրանց հարցի և հենց իրենց նկատմամբ դրսևորված վերաբերմունքը:

Հեռախոսային հարցմանը մասնակցել է 1000 մարդ: Դրանցից տղամարդիկ կազմել են 28,2%, կանայք՝ 71,8%: Հարցվածները հիմնականում եղել են «21-40» և «41-60» տարեկան (համապատասխանաբար 42,6% և 40,6%): «61-ից բարձր» և «մինչև 20» տարեկան են եղել հարցվածների համապատասխանաբար 12,1% և 4,7%-ը: Հարցվածների 43,9%-ն ուներ բարձրագույն կրթություն, 28-ական տոկոս էր միջնակարգ և միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցողների թիվը: Հարցվածների 24,9%-ը եղել է բյուջետային աշխատող, 23%-ը՝ գործազուրկ, 15,8%-ը՝ տնային տնտեսուհի, 11,6%-ը՝ թոշակառու, 8,3-ական տոկոսը՝ մասնավոր բիզնեսի աշխատակից և ուսանող, 4,4%-ը՝ հասարակական կազմակերպությունների աշխատակից և 3,7%-ը՝ գործարար:

Հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցերին.

1. Բավարարում է Ձեզ արդյոք, հանրային ծառայությունների (օրինակ՝ առողջապահություն, կրթություն, սոցիալական ապահովագրություն, ջրմուղ-կոյուղի, աղբահանություն և այլն) որակը: (1. Այո 2.Ոչ)
2. «Ոչ» պատասխանի դեպքում՝ հանրային ո՞ր ծառայության որակից եք Դուք դժգոհ:
3. Ի՞նչ հարցերով եք Դուք դիմել քաղաքապետարան:
4. Քաղաքապետարանում Ձեր խնդրի լուծման ժամանակ ի՞նչ խոչընդոտների եք հանդիպել:

Ծառայությունների որակից դժգոհություն է հայտնել հարցման մասնակիցների 72,2%-ը: Դժգոհությունն ամենից ավելի դրսևորվել է Աշտարակում (94%) և ամենապակասը Իջևանում (56,5%): Բացառությամբ Վանաձորի (առաջին տեղում է ջրմուղ-կոյուղին) և Գորիսի (առողջապահություն)՝ մնացած համայնքներում հարցվողների կողմից որպես հիմնախնդիր ներկայացվել է աղբահանությունը: Մոնիտորինգային գործընթացի միասնականությունն ապահովելու համար որոշում է կայացվել ընտրել հենց այդ ծառայությունը:

Հարցման մասնակիցներն իրենց դժգոհության հարցով քաղաքապետարան համարյա չեն դիմում (72,6%): Դիմելուց էլ մարդիկ փորձում են կարգավորել աշխատանքի տեղավորման, ֆինանսական աջակցության, տարածքի տրամադրման և երբեմն տեղեկանքի, նպաստի և այլ հարցերը: Դժգոհության պատճառ հանդիսացող հարցերով դիմումներ չեն հղվում կամ արվում են չափազանց քիչ: Ամենից ավելի դիմում հղվել է Աշտարակում ջրմուղ-կոյուղու հարցով (3,5%), այն դեպքում, երբ այդ ծառայության որակից դժգոհ մարդկանց տեսակարար կշիռը կազմել է 18,35%: Մնացած համայնքներում դիմումները ջրի, աղբի կամ առողջապահության հարցերով չեն գերազանցում 1-2 տոկոսը:

Քաղաքապետարաններում դիմումների 36,86%-ը մերժվել է, 32,5%-ը չի մերժվել, իսկ 27,7%-ի հարցով գործընթացը կամ ձգձգվել և կամ էլ պաշտոնական մերժման բացակայության պայմաններում ոչինչ չի արվել:

Հարց 1. Հանրային ծառայությունների որակի նկատմամբ հարցման մասնակիցների բավարարվածությունը (պատասխան՝ «այո») կամ անբավարարվածությունը (պատասխան՝ «ոչ»)

	Աշտ	%	Գորիս	%	Վայք	%	Իջև	%	Վան	%	Ընդ	%
Այո	12	6	57	28,5	73	36,5	87	43,5	49	24,5	278	27,8
Ոչ	188	94	143	71,5	127	63,5	113	56,5	151	75,5	722	72,2
Ընդ	200	100	200	100	200	100	200	100	200	100	1000	100

Հարց 2. Բացասական գնահատականի արժանացած հանրային ծառայությունների տեսակները

Աշտարակ



Գորիս



Վայք



Իջևան



Վանաձոր



Հարց 3. Քաղաքապետարան դիմելու դրդապատճառները կամ ընդհանրապես չդիմելը

Աշտարակ



Գորիս



Վայք



Իջևան



Վանաձոր



Հարց 4. Քաղաքապետարանում խոչընդոտների առկայությունը

Աշտարակ



Գորիս



Վայք



Իջևան



Վանաձոր



Հավելված 3

Բնակչության մասնակցության վերաբերյալ հեռախոսային հարցում

ՀՏԿ Աշտարակի, Գորիսի, Վայքի, Իջևանի և Վանաձորի ներկայացուցիչների կողմից իրենց համայնքներում 2005թ. ապրիլին իրականացվել են 200-ական հեռախոսային հարցումները: Հարցումը նպատակ ուներ պարզելու տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկությունն և գնահատելու հանրային մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Հարցման միջոցով պետք է պարզվեր, թե որքանով և որ աղբյուրներից է բնակչությունը տեղյակ տեղական իշխանությունների որոշումներին, և մասնակցու՞մ են, արդյոք, մարդիկ ավագանու նիստերին և տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող հանրային լսումներին: Եվ եթե ցածր է մարդկանց ակտիվությունը նշված հարցերում, ապա որոնք են դրա հիմնական պատճառները:

Հեռախոսային հարցմանը մասնակցել է 1000 մարդ: Դրանցից տղամարդիկ կազմել են 32,7%, կանայք՝ 67,3%: Հարցվածները հիմնականում եղել են «21-40» և «41-60» տարեկան (համապատասխանաբար 44,6% և 38,9%): «61-ից բարձր» և «մինչև 20» տարեկան են եղել հարցվածների համապատասխանաբար 10,2%-ը և 6,3%-ը: Հարցվածների 38%-ն ուներ բարձրագույն կրթություն, 33%-ը՝ միջնակարգ-մասնագիտական և 28%-ը՝ միջնակարգ կրթություն: Հարցվածների 22,3%-ը եղել է գործազուրկ, 17,4%-ը՝ բյուջետային աշխատող, 15,1%-ը՝ տնային տնտեսուհի, 14,1%-ը՝ մասնավոր բիզնեսի աշխատակից, 10,3%-ը՝ թոշակառու, 9%-ը՝ հասարակական կազմակերպությունների աշխատակից, 7,3%-ը՝ ուսանող, և 4,5%-ը՝ գործարար:

Հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցերին.

1. Տեղյա՞կ եք, արդյոք, ձեր տեղական իշխանությունների որոշումներին:
2. Եթե այո, ապա որտեղի՞ց…
3. Եթե ոչ, ապա ինչու՞...
4. Մասնակցել ե՞ք, արդյոք, Ձեր քաղաքապետարանի կողմից կազմակերպված հանրային լսումներին:
5. Եթե այո, ապա ինչպիսի՞ հարցերով …
6. Եթե ոչ, ապա ինչու՞…
7. Մասնակցել ե՞ք, արդյոք, ավագանու նիստերին:
8. Եթե այո, ապա ի՞նչ հարցի առնչությամբ…
9. Եթե ոչ, ապա ինչու՞…

Տեղական իշխանությունների որոշումներին ծանոթ է հարցման մասնակիցների 22%-ը: Տեղեկացվածության բացակայությունն դրսևորվել է Վայքում (95,5%) և Աշտարակում (93,5%): ՏԻՄ-երի որոշումների մասին ամենից ավելի տեղեկացված են Գորիսի և Իջևանի քաղաքացիները (համապատասխանաբար 36 և 35 տոկոս): Տեղական իշխանությունների որոշումների վերաբերյալ տեղեկացվածության աղբյուր է հանդիսանում հիմնականում մամուլն ու հեռուստատեսությունը, հատկապես տեղականը: Միայն Վայքում է նկատվում այլ պատկեր. այն փոքրաթիվ (1,5%) վայքեցիները, որ ծանոթ են խնդրո առարկա որոշումներին, դա ձեռք են բերել շփվելով քաղաքապետարանի հետ: Տվյալ իրողությունը բացատրվում է Վայքի ոչ մարզկենտրոն լինելու հանգամանքով, որտեղ լուս է տեսնում ընդամենը մեկ թերթ: Սակայն մարզկենտրոն Աշտարակում ևս ՏԻՄ-երի որոշումներին ծանոթ հարցվածների միայն 6,5-7%-ը, և դրանց կեսը՝ լրատվության միջոցով:

Տեղական իշխանությունների որոշումների վերաբերյալ տեղեկացվածության բացակայությունը մեկնաբանելու հարցին հիմնականում տրվել է «չեմ հետաքրքրվել»

պատասխանը (բոլոր հարցվածների 45%-ը): Բավական մեծ ցուցանիշներ են գրանցել «վստահ չեմ, որ կպատասխանեն» (բոլոր հարցվածների 17,4%) և «չգիտեմ, ում և ինչպես դիմեմ» (12,4%) տարբերակները: Ընդ որում, պատասխանների վերջին երկու տարբերակները համարյա թե բացակայում են Իջևանում (համապատասխանաբար 0,1 և 0,2 տոկոս)՝ իջևանցիներն ավելի տեղյակ են, թե ում դիմեն որոշումներին ծանոթանալու համար և վստահություն են տածում այդ որոշումները կայացնող մարմինների նկատմամբ: Չնայած հենց նրանց մոտ է գրանցվել պասիվության ամենամեծ ցուցանիշը (59%):

Հարցաթերթում ներառված հարցերի երկրորդ խմբի՝ հանրային լսումների վերաբերյալ պատկերն ավելի տխուր է: 1000 մարդուց ընդամենը 24 հոգի (2,4%) է մասնակցել լսումների (Վայքում՝ ոչ մեկը): Լսումների օրակարգը ներառել է կենցաղային, բնապահպանական, հանրային ծառայությունների, ինչպես նաև համայնքի եռամյա զարգացման ծրագրի (Գորիսի դեպքում) հարցերը: Լսումներին չմասնակցելու պատճառաբանությունը ցուցադրում է հետևյալ պատկերը՝ «տեղյակ չեմ եղել» (բոլոր հարցվածների 40,6%), «չեմ հետաքրքրվել» (38,6%) և «հանրային լսումներ տեղի չեն ունենում» (15%):

Համանման պատկեր է բացահայտվել ավագանու նիստերին մասնակցելու հարցերի խմբի առնչությամբ: Նիստերին մասնակցել է միայն 19 մարդ (1,9%): Հարցվածների 50,5%-ը չի հետաքրքրվում ավագանու նիստերով, ավելի պակաս մասը՝ 27,9%-ը տեղյակ չէ դրանց ացկացման վերաբերյալ, դրանից էլ ավելի պակաս մասը՝ 12,9%-ը կարծում է, որ դրանք դռնփակ են, և միայն 3,3%-ն է ենթադրում, որ ավագանու նիստեր տեղի չեն ունենում: Ավագանու նիստերին քննարկվել են համայնքի զարգացման եռամյա ծրագիրը, բնակչության սոցիալական վիճակը, տարածքների սեփականաշնորհման և այլ հարցեր:

Հարց 1. ՏԻՄ-երի որոշումների վերաբերյալ տեղեկացվածությունը («այո») կամ չտեղեկացվածությունը («ոչ»)

	Աշտ	%	Գորիս	%	Վայք	%	Իջև	%	Վան	%	Ընդ	%
Այո	13	6,5	72	36	9	4,5	70	35	56	28	220	22
Ոչ	187	93,5	128	64	191	95,5	130	65	144	72	780	78
Ընդ	200	100	200	100	200	100	200	100	200	100	1000	100

Հարց 2. ՏԻՄ-երի որոշումների վերաբերյալ տեղեկացվածության աղբյուրները

Աշտարակ



Գորիս



Վայք



Իջևան



Վանաձոր



Հարց 3. ՏԻՄ-երի որոշումների վերաբերյալ չտեղեկացվածության պատճառները

Աշտարակ



Գորիս



Վայք



Իջևան



Վանաձոր



Հարց 4. Քաղաքապետարանի կողմից կազմակերպված հանրային լսումներին մասնակցությունը

Աշտարակ

	Թիվ	%
Այո	1	0,5
Ոչ	199	99,5
Ընդ.	200	100

Գորիս

	Թիվ	%
Այո	9	4,5
Ոչ	191	95,5
Ընդ.	200	100

Վայք

	Թիվ	%
Այո	0	0
Ոչ	200	100
Ընդ.	200	100

Իջևան

	Թիվ	%
Այո	11	5,5
Ոչ	189	94,5
Ընդ.	200	100

Վանաձոր

	Թիվ	%
Այո	3	1,5
Ոչ	197	98,5
Ընդ.	200	100

Հարց 5. Քաղաքապետարանի կողմից կազմակերպված հանրային լսումների (որոնց մասնակցել են հարցվողները) հարցերը

Աշտարակ

	Թիվ	%
Թոշակառուն.սոց.վիճակի հարցերով	1	0,5
Պատասխան չունեմ	199	99,5
	200	100

Գորիս

	Թիվ	%
Աղքատ. հաղթ. ռազմ. թեմայով	3	1,5
Փողոցներ բարեկարգման	2	1
Համայնքի եռամյա զարգ. ծրագ. քնն.	4	2
Պատասխան չունեմ	191	95,5
Ընդ.	200	100

Վայք

	Թիվ	%
Պատասխան չունեմ	200	100
Ընդ.	200	100

Իջևան

	Թիվ	%
Բնապահպանության	2	1
Աղբահանություն	2	1
Կոմունալ և կենցաղային խնդիրների	7	3,5
Պատասխան չունեմ	189	94,5
Ընդ.	200	100

Վանաձոր

	Թիվ	%
Բնապահպանության	2	1
Քաղաքապետի հաշվետվություն	1	0,5
Պատասխան չունեմ	197	98,5
Ընդ.	200	100

Հարց 6. Քաղաքապետարանի կողմից կազմակերպված հանրային լսումներին չմասնակցելու պատճառները

Աշտարակ



Գորիս



Վայք



Իջևան



Վանաձոր



Հարց 7. Ավագանու նիստերին մասնակցությունը՝ «այո», «ոչ»

Աշտարակ

	Թիվ	%
Այո	1	0,5
Ոչ	199	99,5
Ընդ.	200	100

Գորիս

	Թիվ	%
Այո	5	2,5
Ոչ	195	97,5
Ընդ.	200	100

Վայք

	Թիվ	%
Այո	0	0
Ոչ	200	100
Ընդ.	200	100

Իջևան

	Թիվ	%
Այո	7	3,5
Ոչ	193	96,5
Ընդ.	200	100

Վանաձոր

	Թիվ	%
Այո	6	3
Ոչ	194	97
Ընդ.	200	100

Հարց 8. Ավագանու նիստերի (որոնց մասնակցել են հարցվողները) հարցերը

Աշտարակ

	Թիվ	%
Ընրությունների հետ կապված	1	0,5
Պատասխան չունեմ	199	99,5
Ընդ.	200	100

Գորիս

	Թիվ	%
Համայնքի եռամյա զարգ. ծրագ. քնն.	4	2
Կրթ. և մշակ. կյանքի զարգ. հարց.	1	0,5
Պատասխան չունեմ	195	97,5
Ընդ.	200	100

Վայք

	Թիվ	%
Պատասխան չունեմ	200	100
Ընդ.	200	100

Իջևան

	Թիվ	%
Տարածքի օտարման	1	0,5
Տարածքի սեփականաշնորհման	1	0,5
Քաղաքի բարեկ. և կանաչ.	1	0,5
Բնակչության սոց. վիճ.	4	2
Պատասխան չունեմ	193	96,5
Ընդ.	200	100

Վանաձոր

	Թիվ	%
Տարածքի օտարման	4	2
Տարածքի սեփականաշնորհման	3	1,5
Պատասխան չունեմ	193	96,5
Ընդ.	200	100

Հարց 9. Ավագանու նիստերին չմասնակցելու պատճառները

Աշտարակ



Գորիս



Վայք



Իջևան



Վանաձոր



Հավելված 4

Ֆոկուսխմբային քննարկումներ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԳՈՐԻՍ

ՀԿ խմբեր
1. Արտաշես Տոռոզյան, Գորիսի ուսուցիչների միություն
2. Աննա Ավետիսյան, Գորիսի ուսուցիչների միություն
3. Սուրիկ Մկրտչյան, Գորիսի ավագանի
4. Արթուր Վարդազարյան, Նոր հորիզոններ
5. Ռուզաննա Տոռոզյան, Լեռնեցիների առողջ սերունդ
6. Գեղամ Այվազյան, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
7. Էդգար Դոդրունց, Գորիսի երիտասարդական միություն
8. Արամ Մուսախանյան, Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն
9. Վարդիկ Դադունց, Արքայադուստր Փարվանա
10. Յուրի Պետրոսյան, Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն, Սյունիքի մասնաճյուղ
11. Սևադա Խոջաբաղյան, Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն

Քաղաքացիների ակտիվ խմբեր
1. Ֆլորա Տոռոզյան
2. Գայանե Աղաբեկյան
3. Անահիտ Ադունց
4. Ալբերտ Դինգչյան
5. Դավիթ Բաբախանյան
6. Ժիրայր Մարտիրոսյան
7. Եվգենիա Խալաֆյան
8. Արմինե Հովակիմյան

ՎԱՅՔ

ՀԿ խմբեր
1. Ռուզաննա Ղազարյան, Աշխատանք և հայրենիք
2. Գևորգ Գևորգյան, Կարմիր խաչ
3. Սեդա Խաչատրյան, Մարզատեխնիկական ակումբ
4. Ռուզաննա Տոռոզյան, Լեռնեցիների առողջ սերունդ
5. Շիրակ Միքայելյան, Վայքի կանաչներ
6. Գարեգին Սաֆարյան, Հույս-98
7. Պետրոսյան Նունե, «Մարտիրոս» բարեգործական հիմնադրամ
8. Մարգարյան Բախշի, Արհմիություններ

Քաղաքացիների ակտիվ խմբեր
1. Անահիտ Այվազյան
2. Սեդա Բաբայան
3. Արամ Արամյան
4. Ասյա Մարգարյան
5. Կարեն Ստեփանյան
6. Անուշ Ազատյան

7. Մեխակ Արսենյան

ՎԱՆԱՁՈՐ

ՀԿ խմբեր

1. Հայկուհի Հայրությունյան, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
2. Հրանտ Այվազյան, Հայաստանի ազգային սկաուտական շարժում, Լոռու մասնաճյուղ
3. Գոհար Պետրոսյան, «Լուսաստղ»
4. Արմեն Մատինյան, Համահայկական «Նոր սերունդ» երիտասարդական միություն
5. Աննա Սարգսյան, «Լիար» սոցիալական բարեփոխումների կենտրոն
6. Գայանե Աքուլյան, «Միլենիում»
7. Նարինե Ղազարյան, «Խաչվող ուղիներ»
8. Կամո Եգանյան, «Առաջընթաց»
9. Արթուր Ղազինյան, «Դաշինք»
10. Արփինե Հակոբյան, «ՀԿ ուսուցման և տեղեկատվության կենտրոն»

Քաղաքացիների ակտիվ խմբեր

1. Տաթև Շահվերդյան
2. Աիդա Պետրոսյան
3. Լուսինե Ախմախչյան
4. Կարեն Բաղեյան
5. Լիլիթ Ղարիբյան
6. Լուսինե Բալյան
7. Արամ Զուրաբյան
8. Միեր Մարտիրոսյան
9. Համլետ Բալթաչյան
10. Գոհար Քոչինյան
11. Էդիտա Ավետյան
12. Էլինա Ղազարյան
13. Հերմինե Գասպարյան
14. Աստղիկ Հարությունյան
15. Լիանա Վիրաբյան
16. Նվարդ Առաքելյան
17. Աշոտ Ասլանյան
18. Արայիկ Ժապինյան
19. Ռուդիկ Աֆիցարյան
20. Հայկ Խաչատրյան
21. Քրիստինե Մամուլյան
22. Խաչիկ Գևորգյան
23. Սվետլանա Խաչատրյան
24. Գագիկ Թորոսյան
25. Դիանա Տեր-Ստեփանյան

ԱՇՏԱՐԱԿ

ՀԿ խմբեր

1. Անահիտ Թադևոսյան, Արագածոտնի հասարակական և ոչ-առևտրային կազմակերպությունների Ֆորում
2. Գևորգ Եղիազարյան, ՀԵՆԿ
3. Վարդուհի Գևորգյան, Առաջադեմ կանանց միություն
4. Անահիտ Գևորգյան, ԱԿԴԿ

5. Արծվիկ Ժամկոչյան, Վերնատուն
6. Սաթիկ Հովսեփյան, ԱՇՏԿԱ
7. Հեղինե Աբգարյան, Ներկապնակ
8. Ջուլիետա Գրիգորյան, ԱԿՎՄ
9. Լիլիթ Ղազախեցյան, Երիտասարդների և կանանց «Զարթոնք» կենտրոն
10. Էդգար Զազյան, Հասարակական նախաձեռնությունների կենտրոն
11. Անժելա Հովհաննիսյան, «Ծիծեռնակ» հաշմ. երեխ. ծնողների կազմակերպություն
12. Մարիանա Ղուկասյան, Շոշակն ԿՄԿ
13. Ավիկ Ազիզյան, Աշտարակի ավագանի

Քաղաքացիների ակտիվ խմբեր
1. Արմեն Արիստակեսյան
2. Արսեն Գրիգորյան
3. Արտակ Վերդոյան
4. Հերիքնազ Միքայելյան
5. Սաթենիկ Գալստյան
6. Գայանե Եղունյան
7. Հասմիկ Շուխյան
8. Նունե Անտոնյան
9. Անահիտ Թովմասյան
10. Մարինե Ատոմյան
11. Թամարա Իանոյան

ԻՋԵՎԱՆ

ՀԿ խմբեր
1. Գայանե Համբարձումյան, Մարդու իրավունքների պաշտպանություն
2. Վահե Մայիլյան, Երիտասարդ Տավուշ
3. Տաթևիկ Ստեփանյան, Երիտասարդ Կարմիր Խաչի ընկերություն
4. Ստելլա Ավագյան, Կանանց իրավունքների պաշտպանություն
5. Վաչիկ Սարիբեկյան, Հայկական Կարմիր Խաչի ընկերություն
6. Հայկ Մարդանյան, ԵԿԽ
7. Անդրանիկ Սիմոնյան, Նվաճում
8. Սամվել Ուլիխանյան, Ուլիխանյան Եղբայրներ

Քաղաքացիների ակտիվ խմբեր
1. Ելենա Սեմյորկինա
2. Ցողիկ Մարկոսյան
3. Կարինե Խաչատրյան
4. Ջավահիր Նորիկյան
5. Դավիթ Մայիլյան
6. Արմեն Սարիբեկյան
7. Էդգար Քամալյան
8. Կարեն Դիլբարյան
9. Հերմինե Չապուխյան

Հավելված 5

“Հասարակական մոնիտորինգ. տեսությունը և պրակտիկան” ՀԿ-ների, լրագրողների և ակտիվ քաղաքացիների վերապատրաստում

ք. Գորիս, 2005թ. մայիսի 2-3

ՕՐԱԿԱՐԳ

Օր 1-ին

11:00-11:30	ՀՀ կառավարության հակակոռուպցիոն միջոցառումներ *Վարուժան Հոկտանյան, ՏՀԿ փորձագետ*
11:30-12:00	*Հարց ու պատասխան, քննարկում*
12:00-12:30	Ի՞նչ է հետաքննող ժուռնալիստիկան *Սառա Պետրոսյան, “Հետաքննող լրագրողներ” ՀԿ*
12:30-13:00	*Հարց ու պատասխան, քննարկում*
13:00-14:00	Ճաշի ընդմիջում
14:00-14:30	Մասնակցային մոնիտորինգ *Վարուժան Հոկտանյան, ՏՀԿ փորձագետ*
14:30 -15:15	*Հարց ու պատասխան, քննարկում*
15:15-15:45	Սուրճի ընդմիջում
15:45-16:15	Հեռախոսային հարցման և ֆոկուսային խմբերի տվյալների ներկայացում *Կարինե Ղարիբյան և Վախթանգ Սիրադեղյան (խմբավարներ)*
16:15-16:45	*Հարց ու պատասխան, քննարկում*

Օր 2-րդ

10:00-11:30	Գործնական պարապմունք՝ հասարակական մոնիտորինգի կիրառումը ծառայությունների մատուցման ոլորտում *Կարինե Ղարիբյան և Վախթանգ Սիրադեղյան (խմբավարներ)*
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:00	Շարունակություն

Մասնակիցների ցուցակ

Սյունիքի մարզ

1. Մարատ Դադունց, “Իրավունքների տեղեկատվական կենտրոն” ՀԿ
2. Ռուզաննա Տոռոզյան, “Գորսի ուսուցիչների միություն” ՀԿ
3. Գեղամ Այվազյան, Երիտասարդ իրավաբանների ասոցացիա
4. Ժիրայր Մարտիրոսյան, «Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ
5. Կարինե Ավետիսյան, «Համագործակցության կամար» ՀԿ
6. Էլմիրա Բալասանյան, Ավտոմոտոսիրողների «Բարի երթ» ՀԿ
7. Վարդիկ Դադունց, «Նոր հորիզոններ» ՀԿ
8. Էդիկ Ղուդրունց, «Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ
9. Մագդա Գևորգյան, “Կապանի ուսուցիչներ” ՀԿ
10. Վարուժան Ավանեսյան, “Սիսիանի ուսուցիչների միություն” ՀԿ
11. Արամ Մուսախանյան, “Սյունիքի քաղաքացիական զարգացման կենտրոն” ՀԿ
12. Անդրանիկ Հարությունյան, Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Սյունիքի մասնաճյուղ
13. Լիլիթ Ղազարյան, «Զանգեզուր» թերթ
14. Նելլի Ղուշունց, «Ուսուցիչ» թերթ
15. Ռազմելա Վանեսյան, «Լաստ» հեռուստաընկերություն

Վայոց Ձորի մարզ

1. Վահե Թովմասյան, «Ժրաջան մեղու» ՀԿ, ք. Վայք
2. Արամ Հովսեփյան, «Վայքի ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման կենտրոն» ՀԿ, ք. Վայք
3. Վարդան Ստեփանյան, «Վայոց ապագա» ՀԿ, ք. Վայք
4. Ալմաստ Սաֆարյան, «Հույս -98» ՀԿ, ք. Վայք
5. Լուսինե Աբրահամյան, «Սյունիք» ԲՀԿ, ք. Եղեգնաձոր
6. Շիրակ Միքայելյան, «Հայաստանի Կանաչների Միություն» ՀԿ Վայոց ձորի մասնաճյուղ, ք. Վայք
7. Արսեն Վարդանյան, «Ակսել» ՀԿ, ք. Վայք
8. Նունե Պետրոսյան, «Մարտիրոս» ԲՀԿ, ք. Վայք
9. ՍվետլանաԴովլաթյան, «Վարդաձոր» թերթ, «Եղեգն» ՍՊԸ տնօրեն, ք. Եղեգնաձոր
10. Արթուր Բունիաթյան, «Վայոց ձոր» թերթ, ք. Եղեգնաձոր
11. ՆառաՀարությունյան, «Ագրոլրատու» թերթ, ք. Եղեգնաձոր
12. Լիանաեղիազարյան, «Ասպեկտ» թերթ, ք. Վայք
13. Հասմիկ Հովհաննիսյան «Ասպեկտ» թերթ, ք. Վայք

ք. Վանաձոր, 2005թ. մայիսի 6-7

ՕՐԱԿԱՐԳ

Օր 1-ին

11:00-11:30	ՀՀ կառավարության հակակոռուպցիոն միջոցառումներ *Վարուժան Հոկտանյան, ՏՀԿ փորձագետ*
11:30-12:00	*Հարց ու պատասխան, քննարկում*
12:00-12:30	Ի՞նչ է հետաքննող ժուռնալիստիկան *Էդիկ Բաղդասարյան, "Հետաքննող լրագրողներ" ՀԿ*
12:30-13:00	*Հարց ու պատասխան, քննարկում*
13:00-14:00	Ճաշի ընդմիջում
14:00-14:30	Մասնակցային մոնիտորինգ *Վարուժան Հոկտանյան, ՏՀԿ փորձագետ*
14:30 -15:15	*Հարց ու պատասխան, քննարկում*
15:15-15:45	Սուրճի ընդմիջում
15:45-16:15	Հեռախոսային հարցման և ֆոկուսային խմբերի տվյալների ներկայացում *Կարինե Ղարիբյան և Վախթանգ Սիրադեղյան (խմբավարներ)*
16:15-16:45	*Հարց ու պատասխան, քննարկում*

Օր 2-րդ

10:00-11:30	Գործնական պարապմունք՝ հասարակական մոնիտորինգի կիրառումը ծառայությունների մատուցման ոլորտում *Կարինե Ղարիբյան և Վախթանգ Սիրադեղյան (խմբավարներ)*
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:00	Շարունակություն

Մասնակիցների ցուցակ

Լոռվա մարզ

1. Մանանա Ամյան, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
2. Հրանտ Այվազյան, Հայաստանի ազգային սկաուտական շարժում, Լոռու մասնաճյուղ
3. Նունե Պեպանյան, «Լուսաստղ» ՀԿ
4. Արմեն Մատինյան, Համահայկական «Նոր սերունդ» երիտասարդական միություն
5. Հովհաննես Նիկողոսյան, «Թռիչք» ՀԿ
6. Տաթև Մատինյան, «Պրոֆեսիոնալներ հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ
7. Նարինե Ղազարյան, «Խաչվող ուղիներ» ՀԿ
8. Նարինե Բուլղադարյան, Վանաձորի մամուլի ակումբ
9. Վահագն Անտոնյան, «Արմենպրես» լրատվական գործակալություն
10. Ներկայացուցիչ, «Լոռի TV» հեռուստաընկերություն
11. Ներկայացուցիչ, «Քաղաքացիական նախաձեռնություն» պարբերաթերթ
12. Տաթև Շահվերդյան, ակտիվ քաղաքացի
13. Աիդա Պետրոսյան, ակտիվ քաղաքացի
14. Լուսինե Բալյան, ակտիվ քաղաքացի
15. Լուսինե Աքմաքչյան, ակտիվ քաղաքացի

Տավուշի մարզ

1. Մանուշ Մարալչյան, “Երիտասարդ Տավուշ” ՀԿ
2. Արտուշ Ամիրյան, “Հույսի կամուրջ” ՀԿ
3. Անդրանիկ Սիմոնյան, “Նվաճում” ՀԿ
4. Մերի Թուխիկյան, “Կանաչ Տավուշ” ՀԿ
5. Սամվել Ուլիխանյան, “Ուլիխանյան եղբայրներ” ՀԿ
6. Ստելլա Ավագյան, «Կանանց իրավունքների պաշտպանություն» ՀԿ
7. Նառա Խաչիկյան, Երիտասարդական Կարմիր խաչի ընկերություն
8. Գայանե Համբարձումյան, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ Տավուշի մարզում
9. Նաիրա Գևորգյան, “Տավուշ” թերթ
10. Տաթևիկ Նազինյան, “Իջևան” թերթ
11. Դավիթ Մաիլյան, ակտիվ քաղաքացի
12. Ցողիկ Մարկոսյան, ակտիվ քաղաքացի
13. Կարեն Դիլբարյան, ակտիվ քաղաքացի

ք. Աշտարակ, 2005թ. մայիսի 10-11

ՕՐԱԿԱՐԳ

Օր 1-ին

11:00-11:30	ՀՀ կառավարության հակակոռուպցիոն միջոցառումներ *Վարուժան Հոկտանյան, ՏՀԿ փորձագետ*
11:30-12:00	*Հարց ու պատասխան, քննարկում*
12:00-12:30	Ի՞նչ է հետաքննող ժուռնալիստիկան *Քրիստինե Բարսեղյան, "Հետաքննող լրագրողներ" ՀԿ*
12:30-13:00	*Հարց ու պատասխան, քննարկում*
13:00-14:00	Ճաշի ընդմիջում
14:00-14:30	Մասնակցային մոնիտորինգ *Վարուժան Հոկտանյան, ՏՀԿ փորձագետ*
14:30 -15:15	*Հարց ու պատասխան, քննարկում*
15:15-15:45	Սուրճի ընդմիջում
15:45-16:15	Հեռախոսային հարցման և ֆոկուսային խմբերի տվյալների ներկայացում *Կարինե Ղարիբյան և Վախթանգ Սիրադեղյան (խմբավարներ)*
16:15-16:45	*Հարց ու պատասխան, քննարկում*

Օր 2-րդ

10:00-11:30	Գործնական պարապմունք՝ հասարակական մոնիտորինգի կիրառումը ծառայությունների մատուցման ոլորտում *Կարինե Ղարիբյան և Վախթանգ Սիրադեղյան (խմբավարներ)*
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:00	Շարունակություն

Մասնակիցների ցուցակ

Արագածոտնի մարզ

1. Մարինե Շահազիզյան, Արագածոտնի հասարակական և ոչ առևտրային կազմակերպությունների ֆորում
2. Լիլիթ Ղազախեցյան, Երիտասարդների և կանանց խորհրդատվական «Զարթոնք» կենտրոն
3. Անահիտ Գևորգյան, “Արագածոտնի կանանց և դեռահասների կենտրոն” ՀԿ
4. Վարդուհի Գևորգյան, “Առաջադեմ կանանց միություն” ՀԿ
5. Հեղինե Աբգարյան, «Ներկապնակ» սոցիալ-կրթամշակութային ՀԿ
6. Արծվիկ Ժամկոժյան, “Վերնատուն” համայնքային զարգացման կենտրոն
7. Գայանե Դանիելյան, Աշտարակի տարածաշրջանային կանանց ասոցիացիա
8. Թամարա Ջանոյան, “Գողտրիկ պարտեզ” կրթամշակութային ՀԿ
9. Անժելա Հովհաննիսյան, «Ծիծեռնակ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
10. Ջուլիետա Գրիգորյան, Ազատամարտիկների և կանանց վետերանների միություն
11. Գայանե Պետրոսյան, Արագածոտնի մամուլի ակումբ
12. Ավիկ Ազիզյան, Աշտարակի ավագանու անդամ
13. Նորայր Գրիգորյան, «Աշտարակ» թերթ
14. Վարդևան Գրիգորյան, «Արագած աշխարհ» թերթ
15. Սաթենիկ Ջորյան, Արմենպրես
16. Ժենյա Բրյան, լրագրող
17. Նորիկ Ղոնաղչյան, լրագրող
18. Արսեն Գրիգորյան, ակտիվ քաղաքացի
19. Գայանե Եղոյան, ակտիվ քաղաքացի
20. Անահիտ Թովմասյան, ակտիվ քաղաքացի

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹՐՆԵԹՆԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ԼԵՀԱԿԱՆ-ՉԵԽԱԿԱՆ-ՍԼՈՎԱԿՅԱՆ
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

SOLIDARNOŚĆ
POLSKO-CZESKO-SŁOWACKA

“ԼԵՀԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ”

Ս Ե Մ Ի Ն Ա Ր

Գոլդեն Թյուլիփ Երևան Հոթել
2005թ. հուլիսի 7- 8

Սեմինարը կազմակերպվել է “Ոչ կոռուպցիային. տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիական վերահսկողություն” ծրագրի շրջանակներում և ֆինանսավորվել է Լեհաստանում և Հայաստանում բրիտանական դեսպանատների միջոցով՝ Մեծ Բրիտանիայի արտաքին և համագործակցության երկրների նախարարության Եվրոպայի վերամիավորման ծրագրի Գլոբալ հնարավորությունների հիմնադրամի կողմից

Մարզային ՀԿ ներկայացուցիչների մասնակցությունը ֆինանսավորվել է “Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն” ծրագրի շրջանակներում՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Հուլիսի 7, 2005		
09.45 -10.00	Գրանցում	
10.00 - 10.15	Բացման խոսք և ծրագրի ներկայացում	**Ամալյա Կոստանյան**, *ՏԶԿ/ԹԻ Հայաստան*, **Սարա Մյուրել**, *Բրիտանական դեսպանատուն*
10.15 - 10.45	“Տեղական ինքնակառավարման համակարգը Լեհաստանում”	**Ադամ Կվիատկովսկի**, *Վարշավայի Պրագա Պոլուդնիե խորհուրդ*
10.45 - 11.15	Հարց ու պատասխան	
11.15 - 11.45	Սուրճի ընդմիջում	**Ձմեռային այգի**
11.45 - 12.15	“Կոռուպցիայի ընկալումը Լեհաստանում. ուսումնասիրության տվյալներ”	**Ցեզարի Տրուտկովսկի**, *Վարշավայի համալսարան*
12.15 - 12.45	“Կոռուպցիան Հայաստանում. հիմնական խնդիրները”	**Ամալյա Կոստանյան**, *ՏԶԿ/ԹԻ Հայաստան*
12.45 - 13.15	Հարց ու պատասխան	
13.15 - 14.15	Ճաշի ընդմիջում	**“Ռոսսինի” ռեստորան**
14.15 - 15.00	Քննարկում՝ “Ընդհանուր խնդիրները և երկրների առանձնահատկությունները”	<u>Մոդերատորներ՝</u> **Ցեզարի Տրուտկովսկի**, *Վարշավայի համալսարան* **Ամալյա Կոստանյան**, *ՏԶԿ/ԹԻ Հայաստան*

15.00 - 15.30	“Կոռուպցիայի կանխարգելումը Լեհաստանում. իրավական հիմքեր”	**Ադամ Կվիատկովսկի**, *Վարշավայի Պրագա Պոլուդնիե խորհուրդ*
15.30 - 16.00	Հարց ու պատասխան	
16.00 - 16.15	Սուրճի ընդմիջում	**Ճմեռային այգի**
16.15 - 16.45	“Կոռուպցիայի կանխարգելումը Լեհաստանում. ըչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը”	**Գրաժինա Կոպինսկա,** *Ստեֆան Բատորիի հիմնադրամ*
16.45 - 17.15	Հարց ու պատասխան / Ելույթներ	
19.00 - 20.30	Ընթրիք	
Հուլիսի 8, 2005		
10.00 - 10.30	“Կոռուպցիայի դեմ պայքարը Լեհաստանի տեղական ինքնակառավարման մարմիններում”	**Ադամ Կվիատկովսկի**, *Վարշավայի Պրագա Պոլուդնիե խորհուրդ*
10.30 - 11.00	“Ստեֆան Բաթորի հիմնադրամի հակակոռուպցիոն ծրագիրը”	**Գրաժինա Կոպինսկա,** *Ստեֆան Բատորիի հիմնադրամ*
11.00 - 11.30	Հարց ու պատասխան / Ելույթներ	
11.30 - 12.00	Սուրճի ընդմիջում	**Ճմեռային այգի**
12.00 - 12.30	“Թափանցիկ Լեհաստան. քարոզարշավ”	
12.30 - 13.00	“ՏՃԿ/ԹիԱյ Հայաստանի փորձը տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկության և մասնակցության վերաբերյալ”	**Սոնա Այվազյան**, *ՏՃԿ/ԹԻ Հայաստան*
13.00 - 13.30	Հարց ու պատասխան / Ելույթներ	
13.30 - 14.30	Ճաշի ընդմիջում	**“Ռոսսինի” ռեստորան**
14.30 - 15.30	2 խմբային քննարկում՝ “Լեհաստանի փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում”	<u>Մոդերատորներ՝</u> Ամեն խմբում 2-ական փորձագետ
15.30 - 16.00	Դիտարկումներ խմբային քննարկումներից	Խմբերի ներկայացուցիչներ
16.00 - 16.30	Ամփոփում	<u>Մոդերատորներ՝</u> **Ադամ Կվիատկովսկի**, *Վարշավայի Պրագա Պոլուդնիե խորհուրդ* **Գրաժինա Կոպինսկա,** *Ստեֆան Բատորիի հիմնադրամ*

Աղբահանությանը վերաբերող հարցերով դիմել՝

Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ
Քաղաքապետարանի կոմունալ
տնտեսության բաժնի պետ
Պետրոս Զոհրաբյան հեռ. 3-18-70
"Աշտարակի կոմունալ տնտեսություն" ԲԲԸ տնօրեն
Ռաֆիկ Մարտիրոսյան, հեռ. 3-31-80

Լոռու մարզ, ք. Վանաձոր
Քաղաքապետարանի կոմունալ
տնտեսության բաժնի պետ
Լյովա Կարապետյան, հեռ. 4-03-97, 4-67-49
"Բէսեմէլստ" ՍՊԸ նախագահ
Բելա Շահբազյան, հեռ. 4-68-03, 4-34-18
"Սանաշխատանք" ԱՍ տնօրեն
Վարշամ Մկրտչյան, հեռ. 091 21-27-70
"Վանսան" ՍՊԸ տնօրեն
Արտյոմ Ղափանյան, հեռ. 2-28-76

Սյունիքի մարզ, ք. Գորիս
Քաղաքապետարանի կոմունալ
տնտեսության բաժնի պետ
Էրիկ Խաչատրյան, հեռ. 2-56-96
բաժնի մասնագետ
Նելսոն Միրաքյան, հեռ. 2-56-96
"Գորիս ՏՆՏ" ՓԲԸ տնօրեն
Սեյրան Գևորգյան, հեռ. 2-21-43, 2-64-39

Տավուշի մարզ, ք. Իջևան
Քաղաքապետարանի կոմունալ
տնտեսության բաժնի պետ
Գառնիկ Բլբուլյան, հեռ. 3-46-84
"Բարդի" ՓԲԸ տնօրեն
Սամվել Չիբուխչյան, հեռ. 3-10-30

Վայոց Ձորի մարզ, ք. Վայք
Քաղաքապետարանի կոմունալ տնտեսության
բաժնի պատասխանատու
Համլետ Խաչատրյան, հեռ. 2-15-79
"Վայքի սանմաքրում և կանաչապատում"
ՓԲԸ տնօրեն
Հովհաննես Մուշկամբարյան, հեռ.՝ 2-15-79

Ի գիտություն քաղաքացիների՝

- Աղբահանության ծառայության սակագինը յուրաքանչյուր անձի համար սահմանված է՝
  - ք.Աշտարակ - 100 դրամ.
  - ք.Վայք - 100 դրամ.
  - ք.Գորիս - 50 դրամ.
  - ք.Իջևան - 50 դրամ.
  - ք.Վանաձոր.
    - բազմաբնակարանային շենքեր - 50 դրամ,
    - մասնավոր տներ - 60 դրամ:

- Աղբահանության ծառայությունից օգտվելու համար դուք պետք է կնքեք ծառայության մատուցման պայմանագիր աղբահանություն իրականացնող կազմակերպության հետ:

- Պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում կարող եք դիմել առաջին ատյանի դատարան:

Հասցե. Նալբանդյան 5, սենյակ 35 և 38,
Երևան 375010, Հայաստան
Հեռ. (374 10) 585 578, 526 914
Ֆաքս. (374 10) 585 578
Էլ.-փոստ. crd@transparency.am
Ինտերնետ կայք. www.transparency.am

Տարածաշրջանային զարգացման կենտրոն
Թրանսփարենսի Ինթրնեշնլ Հայաստան

ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՔԱՂԱՔԸ

ԱՄՆ դեսպանատուն

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն

Հավելված 7

2004-2005 թ. Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթրնեշնլ հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվում են "Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն" "Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մարմիններում" ծրագրերը:

Ծրագրերի նպատակը քաղաքացիներին կոռուպցիային առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկելն է և հասարակական վերահսկողական հմտություններ զարգացնելը տեղական ինքնակառավարման մակարդակում թափանցիկությունը և մասնակցությունը խթանելու համար:

2005 թ. փետրվարին ծրագրերի շրջանակում Հայաստանի Արագածոտն (ք.Աշտարակ), Լոռի (ք.Վանաձոր), Սյունիք (ք. Գորիս), Վայոց Ձոր (ք. Վայք) և Տավուշ (ք. Իջևան) մարզերում անց է կացվել հեռախոսային հարցում՝ պարզելու հանրային ծառայությունների մատուցման որակը և առավել դժգոհություն հարուցող ծառայությունները:

Ըստ այդմ ծառայությունների որակից դժգոհություն է հայտնել հարցման 1000 մասնակիցների 72.2%-ը: Հարցվողների մեծամասնությունը որպես հիմնախնդիր մատնանշել է աղբահանությունը, չնայած վերջիններս իրենց դժգոհության հարցով քաղաքապետարան համարյա չեն դիմում (72,6%):

Քաղաքապետարաններում դիմումների 36,86%-ը մերժվել է, 32,5%-ը ընթացք է տրվել, իսկ 27,7%-ի հարցով գործընթացը կամ ձգձգվել և կամ էլ պաշտոնական մերժման բացակայության պայմաններում ոչինչ չի արվել:

Հարցման արդյունքների համաձայն տեղական իշխանությունների որոշումներին ծանոթ էին հարցման մասնակիցների ընդամենը 22%-ը: Տեղական որոշումների վերաբերյալ տեղեկացվածության աղբյուր են հանդիսանում հիմնականում մամուլն ու հեռուստատեսությունը, հատկապես՝ տեղականը:

Տեղական իշխանությունների որոշումների վերաբերյալ տեղեկացվածության բացակայությունը մեկնաբանելու հարցին հիմնականում տրվել է «չեմ հետաքրքրվել» պատասխանը (բոլոր հարցվածների 45%-ը): Բավական մեծ ցուցանիշներ են գրանցել «վստահ չեմ, որ կպատասխանեն» (հարցվածների 17,4%) և «չգիտեմ, թե ում և ինչպես դիմեմ» (12,4%) տարբերակները:

Ընդամենը 24 (2,4%) անձ է մասնակցել հանրային լսումների: Լսումներին չմասնակցելու պատճառաբանությունը ցուցադրում է հետևյալ պատկերը՝ «տեղյակ չեմ եղել» (բոլոր հարցվածների 40,6%), «չեմ հետաքրքրվել» (38,6%) և «հանրային լսումներ տեղի չեն ունենում» (15%):

Ավագանու նիստերին մասնակցել է միայն 19 մարդ (1,9%): Հարցվողների 50,5%-ը չի հետաքրքրվում ավագանու նիստերով, ավելի պակաս մասը՝ 27,9%-ը տեղյակ չէ դրանց ացկացման վերաբերյալ, դրանից էլ ավելի պակաս մասը՝ 12,9%-ը կարծում է, որ դրանք դռնփակ են, և միայն 3,3%-ը՝ ենթադրում է, որ ավագանու նիստեր տեղի չեն ունենում:

Ս.թ. մայիսից նշված քաղաքներում սկսվել են վերապատրաստումներ և փորձնական մոնիտորինգ (դիտարկում): Դիտարկումներն իրականացվում են նշված հինգ քաղաքներում ստեղծված աշխատանքային խմբերի կողմից: Դիտարկման ընթացքում իրականացվում են հետևյալ գործողությունները՝ տեղեկատու հեռախոսի ապահովում

- ֆոտոդիտարկումներ
- տեսադիտարկումներ
- աղբատար մեքենաների
- այցերի ժամանակացույցի դիտարկում
- դիտարկման արդյունքների լուսաբանում:

Ծրագրի ընթացքում իրականացվել են նաև՝

- հանրային լսումներ
- "մաքուր բակ" ակցիա / մրցույթ
- մասնակցություն ավագանու նիստերին
- դասընթացներ հասարակական կազմակերպությունների, լրագրողների և բնակիչների համար:
- դիտարկման արդյունքների հրապարակում և ներկայացում:

Ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին գործում է տեղեկատու հեռախոս.

Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ
Հեռ. 3 62 76
Ժամը 12.00 14.00
Գևորգ Եղիազարյան

Լոռու մարզ, ք. Վանաձոր
Հեռ. 2 29 67
Ժամը 16.00 -18.00
Իրինա Հակոբյան

Սյունիքի մարզ, ք. Գորիս
Հեռ. 2 40 00, 2 23 19
Ժամը 16.00 - 18.00
Արտաշես Տոռոզյան

Վայոց Ձորի մարզ, ք. Վայք
Հեռ. 2 11 90
Ժամը 16.00 -18.00
Ռուզան Ղազարյան

Տավուշի մարզ, ք. Իջևան
Հեռ. 3 56 46
Ժամը 16.00 -18.00
Արման Գևորգյան

Հավելված 8

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2005թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթրնեշնլ հայաստանյան մասնաճյուղը Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից ֆինանսավորվող «Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» ծրագրի շրջանակներում իրականացրել է Վանաձորի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգ: Մոնիտորինգի են ենթարկվել վարչական ռեսուրսի և նրա բաղկացուցիչ մասերի՝ ինստիտուցիոնալ, ֆինանսական և լրատվական ռեսուրսի օգտագործման դեպքերը:

Ինստիտուցիոնալ ռեսուրսի օգտագործումը դիտարկվել է աշխատանքային պարտականություններ կատարելիս պետական և համայնքային մարմինների և դրանց աշխատակիցների կողմից որևէ թեկնածուի օգտին նախընտրական քարոզչություն իրականացնելու կամ վերջինիս որևէ ձևով աջակցելու առումով: Դիտարկվել է նաև հանրային տարածքների և դահլիճների, գրասենյակային սարքավորումների և ծառայողական մեքենաների տրամադրումը, նախընտրական միջոցառումների կազմակերպումը պետական և համայնքային հիմնարկների աշխատակիցների մասնակցությամբ, պետական և համայնքային նշանակության միջոցառումների օգտագործումը քարոզչության համար և այլն:

Ֆինանսական ռեսուրսի օգտագործումը վեր հանելու նպատակով դիտարկվել են պետական կամ համայնքային միջոցների օգտագործման դրսևորումները՝ պետական կամ համայնքային սեփականությամբ ընկերություններից միջոցների տրամադրում որևէ թեկնածուի, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին և ընտրողներին կաշառելը, ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով վճարումներ կամ դրանց խոստումներ տալը և այլն:

Լրատվական ռեսուրսի օգտագործման դիտարկումը ենթադրում էր Վանաձորում լույս տեսնող և հեռարձակվող լրատվամիջոցների կողմից առանձին թեկնածուների նկատմամբ խտրականության դրսևորման արձանագրումը:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ծրագրի փորձագետները մշակել են մոնիտորինգի անցկացման մեթոդաբանությունը և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Որպես մեթոդաբանության մշակման հիմք է ընդունվել ռուսական «Թրանսփարենսի Ինթրնեշնլ-Ռ Հակակոռուպցիոն հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոնի» կատարած՝ ՌԴ Պետդումայի 2003թ. ընտրությունների ընթացքում վարչական ռեսուրսի չարաշահման մոնիտորինգի մեթոդաբանությունը: Օգտագործվել է նաև «**OPEN SOCIETY** JUSTICE INITIATIVE» կողմից ՀԿ-ների համար հրապարակված «Monitoring Election Campaign Finance» ձեռնարկը:

Ծրագրի հաջորդ փուլում Վանաձորի հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) և զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ-ներ) ներկայացուցիչների և առանձին ակտիվ քաղաքացիների մասնակցությամբ ստեղծվել է դիտարկող խումբ, որի անդամների համար սեպտեմբերի 6-ին Երևանում կազմակերպվել է վերապատրաստման պարապմունք:

Սեպտեմբերի 24-25-ին դիտարկող խմբի անդամների կողմից համագործակցության առաջարկով նամակներ են հանձնվել ՀՀ թիվ 30 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի (ԸԸՀ) նախագահ Մինաս

Սայադյանին և քաղաքապետի թեկնածուներ, գործող քաղաքապետ Սամվել Դարբինյանի, գործարար Գագիկ Հովսեփյանի ու Հայաստանի Կոմունիստական կուսակցության (ՀԿԿ) քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Անդրանիկ Ղուկասյանի նախընտրական շտաբեր: Համագործակցության առաջարկն, ըստ դիտարկող խմբի վկայության, միանշանակ ընդունվել է թիվ 30 ԸԸՀ նախագահի կողմից: Միաժամանակ, թիվ 30 ԸԸՀ նախագահը հրաժարվել է տրամադրել թեկնածուների հայտարարագրերը, նշելով, որ դրանք պարունակում են գաղտնի տեղեկություններ և օրենքով ենթակա չեն հրապարակման[1]:

Քաղաքապետի թեկնածու, գործող քաղաքապետ Սամվել Դարբինյանի շտաբում համագործակցելու պատրաստակամություն են հայտնել դիտարկող խմբին, մյուս թեկնածու Գագիկ Հովսեփյանը անվստահությամբ է վերաբերվել համագործակցության առաջարկին, թեև, այնուամենայնիվ, այն ընդունել է, իսկ երրորդ թեկնածու Անդրանիկ Ղուկասյանի առումով որևէ խնդիր չի ծագել: Թեկնածուները համաձայնվել են դիտարկող խմբի անդամներին տեղեկություններ տրամադրել քարոզարշավային միջոցառումների ժամանակացույցի վերաբերյալ: Ամենօրյա կտրվածքով դիտարկվել են քաղաքապետի թեկնածուների նախընտրական միջոցառումները, դրանց արձագանքները հանրապետական և վանաձորյան («Լոռու մարզ», «Բազում», «Վանա Տուր», «Վանաձորյան խճանկար», «Քաղաքացիական նախաձեռնություն») պարբերականներում, ինչպես նաև հեռուստառադիոընկերությունների («Լոռի Թի-Վի», «ՎԱԲԱ», «ՄԻԳ Թի-Վի» և «ՄԻԳ FM») հեռարձակած հաղորդումներում, ինչպես նաև քվեարկության գործընթացի լուսաբանումը, վեր հանվել օրենսդրության խախտման դեպքերը: Այնուհետև, թեկնածուների կողմից կատարված նախընտրական ծախսերի գնահատման համար ճշտվել են հեռուստատեսությամբ և ռադիոյով քարոզարշավային թողարկումների սակագներն ու տևողությունները, ինչպես նաև բուկլետների և պաստառների տպագրման սակագները, բիլբորդերի պատրաստման և տեղադրման գները:

Եվս մեկ հանգամանք՝ չնայած ՀՀ Ընտրական օրենսգրքի (ԸՕ) հոդված 18.7-ով թեկնածուներին արգելվում է նյութական կամ ծառայություն մատուցելու խոստումներ տալը, բայց ոչ մի թեկնածուի և ոչ մի հանդիպում զերծ չի մնացել նման խոստումներից, և այդ պատճառով դրանք խախտումների շարքում ընդհանրապես չեն արձանագրվել: Եթե արվել է մեկ-երկու բացառություն, ապա դա կատարվել է հաշվի առնելով այն գումարի մեծությունը, որի կապակցությամբ խոստում է տրվել կոնկրետ հարցով առանձին ընտրողին:

Քվեարկությանը (ս.թ. հոկտեմբերի 16) հաջորդող շաբաթվա ընթացքում Վանաձորի բոլոր թաղամասերի բնակիչների շրջանում կատարվել է հեռախոսային հարցում: Հարցումը նպատակ ուներ պարզելու թեկնածուների միջև ընտրություն կատարելու շարժառիթները, ընտրակաշառքների տրամադրման հանգամանքը և դրա հնարավոր ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա:

Դիտարկող խմբի կողմից հարցազրույցներ են անցկացվել թեկնածուների կամ նրանց շտաբերի պետերի, պետական և համայնքային պաշտոնյաների ու առանձին բնակիչների հետ:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քարոզարշավի սկզբում դիտարկող խմբի անդամին տրված հարցազրույցում քաղաքապետի թեկնածու Ս. Դարբինյանի կենտրոնական շտաբի պետ Տիգրան Քոչարյանը հայտնել է, որ քարոզարշավ սկսելու օրը՝ սեպտեմբերի 27-ին ստեղծվել է հիմնադրամ, «Արդշինինվեստ» բանկում բացվել է հաշիվ, որի վրա

---

[1] ՀՀ Ընտրական օրենսգիրքը թեկնածուների հայտարարագրերի հրապարակման առումով հղում է կատարվել «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքին, որով հրապարակման ենթակա չեն համարվում միայն առանձին տեղեկություններ և ոչ թե փաստաթուղթն ամբողջությամբ:

փոխանցվել է մոտ 1 մլն 200 հազար դրամ: Գումարը հիմնականում պետք է ծախսվեր բուկլետների, պլակատների և քարոզարշավի ընթացքի վրա: Թեկնածուի կողմից բացված 29 շտաբերի և 3 ենթաշտաբերի աշխատանքներն, ըստ Տ. Քոչարյանի, իրականացվելու են կամավոր սկզբունքներով: Ընտրություններից հետո կարող էին փոխհատուցվել թիմակիցների կրած հնարավոր ֆինանսական վնասները:

Սակայն, ըստ դիտարկող խմբի կողմից ձեռք բերված տեղեկությունների, Ս. Դարբինյանի նախընտրական շտաբերը սկսվել են ձևավորվել սեպտեմբերի 15-ից՝ յուրաքանչյուր շտաբում 10-15 մարդ: Շտաբերի աշխատակիցներին վճարվել է երկու ամսվա աշխատավարձ՝ ամսական 20000 դրամ[2]:

Ս. Դարբինյանի նախընտրական շտաբերի աշխատակիցները զբաղվել են բնակիչների փաստացի քանակը ճշտելով և բնակիչների կարիքների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելով, ինչը շարունակվել է մինչև հոկտեմբերի 14-ը: Կարիքավորների մեծ մասը դիմումներ է գրել քաղաքապետին: Նման դիմումներ են տրվել նաև քաղաքապետի մեկ այլ թեկնածու Գ. Հովսեփյանի շտաբերին՝ հոկտեմբերի 9-ի տվյալներով, ըստ վերջինիս շտաբի պետ Ֆելիքս Մովսիսյանի, առկա է եղել 800 դիմում: Դիմումատուներին երկու կողմից էլ ասվել է, որ նրանց դիմումներին ընթացք կտրվեն ընտրություններից հետո: Մինչդեռ ՀՀ Ընտրական օրենգրքի (ԸՕ) 18.7 հոդվածով, ինչպես արդեն նշվել է, թեկնածուներին արգելվում է նյութական կամ ծառայություն մատուցելու խոստումներ տալը: Իսկ առողջական խնդիրներ ունեցող դիմումատուներին Ս. Դարբինյանի շտաբերում տրամադրվել են կտրոններ, որոնց հիման վրա դեղատներում անվճար դեղորայք է բաշխվել:

Ըստ դիտարկող խմբի, քաղաքապետարանի՝ միանգամից 12 աշխատակից արձակուրդ է գնացել և օժանդակել գործող քաղաքապետի օգտին քարոզչության իրականացմանը: Այս դեպքում պահպանվել է աշխատանքային պարտականությունները կատարելիս պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և դրանց աշխատակիցներին քարոզչությամբ զբաղվելն արգելելու՝ օրենքի պահանջը (ԸՕ, հոդված 18.4.1), սակայն մրցակից թեկնածուները զրկված են եղել նման հնարավորությունից:

Համաձայն Գ. Հովսեփյանի շտաբի պետ Ֆ. Մովսիսյանի հետ դիտարկող խմբի 09.10.2005թ. հարցազրույցի, իրենց թեկնածուի կողմնակիցներից մեկին առևանգել է Ս. Դարբինյանի՝ «Քաղցրիկ» մականունով եղբոր տղան, սակայն առևանգվողը վախենալով հետագա բարդացումներից, խուսափել է փաստի առիթով դիմել դատախազություն (առկա է ձայնագրություն):

Գ. Հովսեփյանի ութ նախընտրական շտաբ, ըստ Ֆ. Մովսիսյանի, փակվել են ճնշումների ազդեցության ներքո, սակայն կենտրոնում տեղակայված երկու շտաբ վերաբացվել է, այդ թվում մեկը ՀՀ պաշտպանության նախարարի և մյուսը Կ.Հարությունյանի (ՀՀ Պաշտպանության նախարարության Ռազմական ոստիկանության վարչության Վանաձորի տարածքային ստորաբաժանման պետ) միջամտության շնորհիվ:

Ըստ Ֆ.Մովսիսյանի նույն հարցազրույցի, իրենց կողմից նկարահանվել է Վարդանանց 82 շենքի առաջին հարկում տեղակայված՝ Ս. Դարբինյանի շտաբից ընտրակաշառքի բաժանումը, սակայն նկատելով դա, վերջինիս թիմակիցները մատնվել են խուճապի և մեքենան քշել են նկարահանող տղաների վրա, հարվածել մեկին ու փախուստի դիմել (ի դեպ, Գ. Հովսեփյանի փակված և վերաբացված շտաբերից մեկը գտնվել է հենց նույն հասցեում):

Ընտրություններից մի քանի օր առաջ դիտարկող խմբին հայտնի է դարձել,

---

[2] Այս ծախսերը չեն ներառվել Ս. Դարբինյանի կողմից կատարված ընդհանուր ծախսերի մեջ, քանի որ, բնականաբար, առկա չէր վարձված անձանց ճշգրիտ թիվը:

որ մի կին տնակային ավանում կազմում է ցուցակներ քվեարկության օրը Գ. Հովսեփյանի կողմից գումարներ տրամադրելու նպատակով, ինչպես նաև վերցնում է դիմումներ: Սակայն հետագայում գումարներ չեն տրամադրվել:

Բազում թաղամասի բնակիչ ոմն Աննայի վկայությամբ ընտրության օրը Գ. Հովսեփյանի կողմնակիցները իրենց թաղամասի «Կատեքսի» շենքից ընտրողներին բաժանել են 3000դրամ, և դա առաջարկվել է նաև իրեն:

Այլ տեղեկություններ համաձայն, հոկտեմբերի 15-ի երեկոյան մոտ ժամը 21.00-ից Ռուզան անունով մի աղջիկ երկու մարդու հետ Ս. Դարբինյանի կողմից գումարներ է բաժանել տնակային ավանում՝ մեկ անձի համար գումարը տատանվել է 1000-1500 դրամի սահմաններում:

Դիտարկող խմբին հայտնի է դարձել նաև, որ Ս. Դարբինյանի կողմից գումարներ են բաժանվել Լազյան փող. վրա գտնվող թիվ 4 դպրոցի հետևի շենքի բոլոր բնակարաններում՝ անձին 2000 դրամ: 3-րդ մասում նրա կողմից տրվող գումարներն ավելի մեծ են եղել՝ 3-5000 դրամ: Գումարներ են բաժանվել 18 շքամուտք ունեցող շենքում՝ Մոսկովյան փողոցի վրա, դասախոսների շենքում՝ Դիմաց թաղամասում, Կույրերի թաղամասում՝ «փոսի միջի խանութների շենքում»: Բանյո փողոցի տնակներից մեկի բնակչուհին Ս. Դարբինյանի կողմից գումար է ստացել «Լոռի» հեռուստաստուդիայի շենքի բնակբաժնից: Գումարներ են բաժանվել նաև Վանաձորի բազմաթիվ այլ թաղամասերում (Բազում, Խանդակ, Քիմիագործներ և այլն):

Լազյան և Ներսիսյան փողոցների բազմաթիվ ընտանիքների ասվել է՝ «տնից դուրս չգաք, մինչև Դարբինյանի կողմից գումարները չբերենք»: Ըստ Վանաձորի էլցանցի (պետը Ս. Դարբինյանի կողմնակիցն է) աշխատակիցներից մեկի, որոշ մարդկանց էլէկտարէներգիայի ցուցմունքները զրոյականացվել են, չնայած մուծումներ չեն եղել:

Նժդեհի փողոցի վրա գտնվող Կոշիկի ֆաբրիկայի շենքում Ս. Դարբինյանի կողմից անձնագրեր են հավաքվել:

Վանաձորի զինկոմիսարիատի ղեկավարը հավաքել է բոլոր աշխատակիցներին և ասել, որ Սերժ Սարգսյանի հրամանով պետք է ընտրեն Ս. Դարբինյանին, հակառակ դեպքում կզրկվեն աշխատանքից:

Ըստ «Լոռի» հ/ը աշխատակիցներից մեկի, Զ. Մալումյան (Գ. Հովսեփյանի թիմից) ելույթի հեռարձակումից 10-15 րոպե անց Ազգային անվտանգության ծառայությունից եկել են ստուդիա, ձայնագրել ելույթն ու տարել իրենց հետ: Տվյալ երևույթը օրենսդրության բացահայտ խախտում չէ, բայց արվել է, որպեսզի ճնշում բանեցվի քաղաքապետին մրցակից թեկնածուի թիմակցի վրա:

Վանաձորի թիվ 1 համաբուժարանում, ըստ դիտարկող խմբի վկայության, Գ. Հովսեփյանի հանդիպումից հետո գլխավոր բժիշկը կրկին հավաքել է բուժաշխատողներին և պատվիրել՝ «Ինչ ասացինք Հովսեփյանի ներկայությամբ՝ դա հեչ, պիտի ընտրեք Դարբինյանին»: Բյուջետային մի շարք հիմնարկների (Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Լոռու մարզային գրադարան, Վանաձորի թիվ 5, 17, 19, 20 դպրոցներ) աշխատակիցներ նախընտրական պայքարի ընթացքում նշել են, որ իրենց վրա ճնշումներ են գործադրվել մարզպետի և իրենց հիմնարկների ղեկավարների կողմից, որպեսզի քարոզեն հօգուտ Ս.Դարբինյանի և ընտրեն նրան: Բյուջետային հիմնարկների ղեկավարների կողմից խոչընդոտներ են հարուցվել նաև Գ. Հովսեփյանի հետ հանդիպումներ կազմակերպելու առումով, մասնավորապես, նման դեպք է արձանագրվել Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում:

Գ. Հովսեփյանի կենտրոնական շտաբում տարածքային շտաբի աշխատակից, Արևիկ անունով մի կին դիտարկող խմբի անդամի ներկայությամբ լացելով պատմել է, որ անծանոթ մեկը զանգահարել է իրեն և ահաբեկել՝ հրամայելով փակել շտաբն ու հեռանալ (առկա է ձայնագրություն):

ԳՈՎԱԶԴՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Ս. Դարբինյանի կողմից պատրաստվել է 2 ռադիոհոլովակ (արժեքը կազմել է 30000 դրամ), որը հեռարձակվել է «ՄԻԳ» ռադիոընկերության եթերով 292 րոպե ընդհանուր տևողությամբ. դրա համար վճարվել է 8176000 դրամ: Պատրաստվել է նաև 3 տեսահոլովակ (արժեքը՝ 90000 դրամ), հեռարձակվել է «ՄԻԳ Թի-Վի»-ով՝ 256 րոպե տևողությամբ գովազդ և վճարովի հաղորդումներ, որի համար վճարվել է 1314300 դրամ: «Լոռի Թի-Վի»-ով հաղորդումկները կազմել են 1005 րոպե՝ վճարվել է 5427000 դրամ: «Լոռի Թի-Վի» հեռուստաընկերությամբ նկարահանվել է Վանաձորի մասին պատմող 16 րոպեանոց ֆիլմ, որն իրականում գովազդում է գործող քաղաքապետի գործունեությունը, և որի վրա ծախսվել է 50000 դրամ: Ս. Դարբինյանը չորս անգամ հանդես է եկել ուղիղ եթերում՝ «ՄԻԳ Թի-Վի»-ով (վճարվել է 387500 դրամ) և «Լոռի Թի-Վի»-ով (1010000 դրամ): ԱԼՄ հեռուստաընկերությամբ հեռարձակվել է 36 րոպե տևողությամբ գովազդ և վճարովի հաղորդումներ, որի համար վճարվել է 972000 դրամ:

Ս. Դարբինյանի կողմից պատրաստել է 2 մեծ գովազդային վահանակ (պատրաստումը՝ 84600 դրամ), որոնք տեղադրված են եղել քաղաքի կենտրոնական մասերում (տեղադրումը մեկ ամիս ժամկետով՝ 81000 դրամ): Տպագրվել է 1000 օրինակ «A3» ֆորմատի գունավոր պաստառ 100000 դրամով, երկու տեսակի տեղեկատվական բուկլետներ (280000 դրամ):

Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանի վեցամյա գործունեության մասին պատմող՝ «6 տարի անց» գունազարդ բրոշյուրը հրատարակվել է «Լուսաբաց հրատարակչատանը» 200 տպաքանակով: Բայց, ըստ դիտարկող խմբի ձեռք բերած տեղեկությունների, իրականում տպագրվել է հինգ անգամ ավելի շատ՝ 1000 օրինակ: Դիտարկող խումբը ձեռք է բերել գրքույկի մեկ օրինակ, որի վրա բացակայում են հրատարակչատան անունը, հասցեն, հեռախոսը և տպագրության քանակը: 200 տպաքանակի դեպքում գրքույկ տպագրելու ծախսերը կկազմեին 180000 դրամ (ընդհանուր հաշվարկում ներառված է այս թիվը), 1000-ի դեպքում՝ 240000 դրամ:

Ընդհանուր հաշվարկով, Ս. Դարբինյանը ծախսել է *18.182.400 դրամ*:

Գ. Հովսեփյանի կողմից պատրաստվել է 2 ֆիլմ 18 րոպե (ծախսվել է 55000 դրամ) և 5 րոպե (ծախսվել է 70000 դրամ) տևողությամբ, որոնք ցուցադրվել են Վանաձորի 3 հեռուստաալիքներով և հանրապետական հեռուստաալիքներով («Հ2» և «ԱԼՄ»):

«Լոռի» հեռուստաընկերության ուղիղ եթերով հեռարձակվել է 3 հաղորդում 200 րոպե տևողությամբ, որի համար վճարվել է 930000 դրամ: Նախաձեռնվել է նաև 70 րոպե տևողությամբ հեռուստատեսային բանավեճ Ս. Դարբինյանի հետ, որի համար վճարվել է 490000 դրամ: Բացի դրանից, «Լոռի»-ով հեռարձակվել են 721 րոպե ընդհանուր տևողությամբ հաղորդումներ, որոնց համար վճարվել է 3893400 դրամ: «ՄԻԳ Թի-Վի»-ով հեռարձակվել է 323 րոպե, որի համար վճարվել է 1259700 դրամ, «Ռադիո ՄԻԳ»-ով՝ 1,5 րոպե (Հեռարձակվել է 10 վայրկյան տևողությամբ 9 հայտարարություն) և վճարվել է 280000 դրամ, «ՎԱԲԱ»-ով՝ 472 րոպե և վճարվել է 1840800 դրամ, «ԱԼՄ»-ով՝ 86 րոպե և վճարվել է 2322000 դրամ:

Գ. Հովսեփյանի կողմից տպագրվել է «A3» չափսի 2500 պաստառ (վճարվել է 162.000 դրամ) և «A2» չափսի 150 պաստառ (վճարվել է 40000 դրամ), 5000 օրինակ տպաքանակով բուկլետ (վճարվել է 300000 դրամ) և 8000 հուշաթերթիկ (վճարվել է 60000 դրամ): Ընդամենը Գ. Հովսեփյանի կողմից ծախսվել է *11.702.900 դրամ*:

ՀԿԿ կողմից համայնքապետի թեկնածու առաջադրված Ա. Ղուկասյանը «Լոռի Թի-Վի»-ի ուղիղ եթերով խոսել է 30 րոպե, որի համար վճարել է 150000 դրամ: Միաժամանակ, Ա. Ղուկասյանի կողմից պատրաստվել է 2 տեսահոլովակ. առաջինը՝ 30 վայրկյան տևողությամբ, որի համար վճարվել է 30000 դրամ, և երկրորդը՝ 3 րոպե տևողությամբ, որի համար վճարվել է 35000 դրամ: Դրանց հեռարձակման համար «Լոռի Թի-Վի»-ին վճարվել է ընդամենը 162000 դրամ. նրա նկատմամբ, ըստ դիտարկող խմբի, կիրառվել է զեղչ:

Ըստ Ա. Ղուկասյանի, կուսակցության կենտրոնական կոմիտեն քարոզարշավի համար շտաբին հատկացրել է մոտ 600-700 ԱՄՆ դոլարի գումար, սակայն հիմնադրամ չի բացվել: Համաձայն դիտարկման, «A3» ֆորմատի 100 գունավոր պաստառի համար վճարվել է 10000 դրամ, 1000 բուկլետի համար՝ 90000 դրամ: ՀԿԿ-ի կողմից պատրաստվել և թեկնածուին անվճար տրամադրվել է 1500 օրինակ տեղեկատվական թերթիկ: Ընդհանուր առմամբ, Ա. Ղուկասյանը քարոզարշավի վրա ծախսել կամ պետք է ծախսած լիներ առնվազն *477.000 դրամ*:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ս.թ. սեպտեմբերի 23-ից մեկնարկել էր «Վանաձորի օր» համաքաղաքային տոնակատարությունը, որը շարունակվել է հաջորդ օրերին՝ ձգվելով մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ, ինչով և նպաստել է քաղաքապետի թեկնածու, գործող քաղաքապետ Ս. Դարբինյանի քարոզարշավին, որից զրկված են եղել վերջինիս մրցակիցները: Նախընտրական քարոզարշավի դիտարկումները սկսվել են սեպտեմբերի 24-ից, իսկ պաշտոնական քարոզարշավին սկիզբ է դրվել սեպտեմբերի 27-ին:

Սեպտեմբերի 24-ին Ստեփան Զորյանի տուն-թանգարանում (համայնքային ենթակայության հիմնարկ) քաղաքի արվեստագետների մասնակցությամբ կայացել է «Զորյանից մինչև ...» վերտառությամբ գրական երեկո: Քաղաքապետի թեկնածու, գործող քաղաքապետ Ս. Դարբինյանը չի մասնակցել երեկոյին, և չնայած քարոզարշավը պաշտոնապես դեռևս չէր մեկնարկել, քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետ Գագիկ Աղաբաբյանը (գտնվել է արձակուրդում) և թանգարանի տնօրեն Ռազմիկ Պողոսյանը ելույթ են ունեցել Ս. Դարբինյանի օգտին: Միջոցառումը նկարահանվել և ցուցադրվել է տեղական «ՄԻԳ Թի-Վի» հեռուստաընկերության կողմից, որի շնորհիվ անօրինական քարոզարշավը ստացել է ավելի մեծ՝ համաքաղաքային ընդգրկում:

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ օրը, քաղաքի մի շարք վայրերում և նորակառույց լողավազանում «Վանաձորի օր» տոնախմբությանը ներկա են եղել ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ՀՀ բնապահպանության փոխնախարար Արսեն Դարբինյանը, ԱԺ պատգամավորներ, Հայաստանում Հնդկաստանի նախկին դեսպան Դիպակ Վոհրան, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, քաղաքապետի թեկնածու Ս. Դարբինյանը: Նախընտրական քարոզչական ելույթներ չեն հնչել, սակայն երեկոյան համերգ-հրավառության ժամանակ ցուցադրվել է «Լոռի Թի-Վի» հ/ը պատրաստած «Մեր քաղաքը» ֆիլմը, ինչը խմբի կողմից որակվել է որպես թաքնված գովազդ: Օրվա միջոցառումները լուսաբանվել են մարզային բոլոր լրատվամիջոցներով, իսկ նման գովազդից, ինչպես արդեն նշվել է բազմիցս, զրկված են եղել մյուս թեկնածուները:

Հոկտեմբերի 4-ին Վանաձորի Կերպարվեստի թանգարանում կայացած հանդիպմանը Ս. Դարբինյանը, տեղեկանալով, որ նկարչուհի Մարիամի արվեստանոցը վերանորոգելու համար անհրաժեշտ է 2000-3000 դոլարի կարգի գումար (Մարիամն, ի դեպ, ժամանակին դիմել էր քաղաքապետարան և Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնից մերժում ստացել), խոստանում է օգնել նրան, ինչն արգելված է ԸՕ հոդված 18.7-ով:

Հոկտեմբերի 7-ին Վանաձորի թիվ 17 դպրոցի 100-ամյակի տարեդարձին մասնակցել են ՀՀ բնապահպանության փոխնախարար Արսեն Դարբինյանը (դպրոցի տնօրեն Թամարա Սաղաթելյանի ամուսինը), Լոռու մարզպետը, Վահան քահանա Ազարյանը, թիվ 30 ԸԸՀ նախագահ, Լոռու մարզպետարանի կրթության և մշակույթի վարչության պետ Մինաս Սայադյանը, մարզպետարանի և քաղաքապետարանի աշխատակիցներ, դպրոցների տնօրեններ:

Հոկտեմբերի 8-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողների հետ Ս. Դարբինյանի

հանդիպմանը ներկա են եղել Լոռու մարզպետը, թիվ 30 ԸԸՀ նախագահը, մարզպետի խորհրդականն ու քաղաքապետարանի աշխատակիցներ: Մարզպետը նշել է, որ օրը ոչ աշխատանքային է և ինքն իրավունք ունի քարոզարշավով զբաղվել, հատկապես, որ Ս. Դարբինյանը «Հանրապետական» կուսակցության քաղաքային կառույցի, իսկ ինքը մարզային կառույցի ղեկավարն է: Մարզպետին նման հնարավորություն է ընձեռում ԸՕ հոդված 18.4.1-ի՝ «աշխատանքային պարտականությունները կատարելիս» հասկացության ոչ հստակ ձևակերպումը, սակայն անհասկանալի է, թե ինչու է ներկա եղել թիվ 30 ԸԸՀ նախագահը, ինչն արգելված է ԸՕ հոդված 18.4.5-ով:

Հոկտեմբերի 10-ին Ս. Դարբինյանը մասնակցել է Վանաձորի նորակառույց Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցու խաչերի ու զանգի օրհնության արարողությանը և դրանց տեղադրմանը, որին ներկա են եղել բազմաթիվ հավատացյալներ, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը. Լոռու մարզպետը, մարզպետարանի և քաղաքապետարանի աշխատակիցներ: Թեկնածու Ս. Դարբինյանը, որը նաև ղեկավարում է եկեղեցու շինարարությունն իրականացնող շինկազմակերպությունը, կարգվել է խաչքավոր: Եկեղեցու խաչերի ու զանգի օծմանը ներկա չեն եղել մյուս թեկնածուները:

Հոկտեմբերի 14-ին Հայքի հրապարակի երկժամանոց համերգն, ըստ քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի վարիչ Գագիկ Աղաբաբյանի, ընտրությունների հետ կապ չունի, այլ քաղաքի տոնի միջոցառումների ծգվելու պատճառով Երևանից եկած հյուրերը, որոնց հետ համերգ տալու պայմանավորվածություն են ունեցել, որոշել են համերգ տալ հենց հոկտեմբերի 14-ին, որը ԸՕ հոդված 18.5-ով քարոզարշավի վերջին թույլատրվող օրն է: Սակայն տվյալ համերգը պետք է օբյեկտիվորեն դիտարկվեր որպես թեկնածու Ս. Դարբինյանի քարոզարշավի վերջին ակկորդը: Նույն օրը Վանաձորի Մ. Թավրիզյանի անվ. Երաժշտական ուսումնարանում ՀՀԿ անդամների հետ թեկնածու Ս. Դարբինյանի նախընտրական քարոզչական հանդիպմանը մասնակցել և ելույթ են ունեցել ՀՀ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահի տեղակալ Արամ Քոչարյանը և Երևանի Նոր Նորքի թաղապետ Դավիթ Պետրոսյանը, ինչն արգելվում է ԸՕ 18.4.1-ով:

Հոկտեմբերի 15-ին Ս. Դարբինյանի շտաբերի աշխատակիցները (թեպետ ըստ ԸՕ 18.5 հոդվածի չունեին դրա իրավունքը) հիշեցման թերթիկներ են բաժանել բնակիչներին: Երեկոյան 19.00-ից հետո շտաբերում հրահանգ է ստացվել գումարներ բաշխել կարիքավոր ընտանիքների (մեկ ձայնի արժեքը տատանվել է 1000-2000 դրամի սահմաններում, իսկ քաղաքի կենտրոնական թաղամասերում, անկախ ընտանիքի անդամների քանակից, յուրաքանչյուր ընտանիքի բաշխվել է 8000-15000 դրամ): Շտաբի աշխատակիցները թեկնածուի վստահված անձի ուղեկցությամբ բաշխել են գումարը, երեկոյան 23.00-ից հետո, երբ նկատվել է, որ չեն հասցնում ավարտել բաշխումը, զանգահարել են բնակարաններ և բնակիչներին հրավիրել շտաբ դրամական օգնություն ստանալու: Այս գործընթացն, ըստ դիտարկող խմբի, շարունակվել է մինչև գիշերվա ժամը 1.00-ը: Գործընթացը, թեև ոչ նույն չափերով, շարունակվել է հաջորդ օրը:

Քվեարկության օրը՝ հոկտեմբերի 16-ին Ս. Դարբինյանի շտաբերի աշխատակիցները, դիտարկող խմբի վկայությամբ, տեղամասերի մոտ խմբված մարդկանց հրավիրել են շտաբեր և հորդորել տեղեկացնելու իրենց հարևաններին, որ վերջիններս ևս կարող են վաճառել իրենց ձայնը. քվեարկության օրը արձանագրվել են նաև 1 շիշ օղիով ձայնը վաճառելու դեպքեր: Ի դեպ, քվեարկության օրվա 2-րդ կեսին բնակիչները գումարներ էին վերցնում թե՛ նրա, և թե՛ մյուս թեկնածուի (Գ. Հովսեփյանի) շտաբից:

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հեռախոսային հարցմանը մասնակցել է 406 մարդ: Տղամարդիկ կազմել են 24.6%, կանայք՝ 75,4%: Հարցվածները հիմնականում եղել են «21-40» և «41-60» տարիքային միջակայքի ներկայացուցիչներ (համապատասխանաբար 42,4% և 33,0%): Հարցվածների 36,7%-ն ուներ բարձրագույն, 36,2%-ը՝ միջնակարգ և 27,1%-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Հարցվածների 23,9%-ը տնային տնտեսուհի էին, 19,0%-ը՝ գործազուրկներ, 18,2%-ը՝ թոշակառուներ, 17,7%-ը՝ մասնավոր բիզնեսի աշխատակիցներ, 15,0%-ը՝ բյուջետային աշխատողներ և այլ խավերի ներկայացուցիչներ:

Համաձայն հարցման արդյունքների, ընտրություններին մասնակցել է հարցվածների 74,1%-ը: Մասնակցածների 18,7%-ն իր ընտրությունը կատարել է ելնելով թեկնածուի ծրագրերից և խոստումներից, 14,5%-ը՝ թեկնածուի նախորդ գործունեության հիման վրա, 15%-ի ընտրությունը պայմանավորվել է թեկնածուի անհատականությամբ և 5%-ինը՝ ընտրակաշառքով: Հարցվածների 24,1%-ը խուսափել է դրդապատճառ ներկայացնել և բավարարվել է հայտնելով, որ կատարել է իր քաղաքացիական պարտքը:

Հարց 2. Ինչո՞վ է պայմանավորվել ձեր ընտրությունը



Ընտրություններին չի մասնակցել հարցվածների 25,9%-ը: Մասնակցություն չցուցաբերած անձանց 38,7%-ն իր չմասնակցելը բացատրել է անտարբերությամբ, 21,7%-ը՝ թեկնածուների նկատմամբ անվստահությամբ, 17,9%-ը՝ տեխնիկական պատճառներով (հիվանդ է եղել կամ բացակայել է քաղաքից) 12,3%-ը՝ գրանցում կամ անձնագիր չունենալու հանգամանքով, 8,5%-ի դեպքում պատճառ են հանդիսացել ընտրողների ցուցակների անճշտությունները:

Հարց 3. Ընտրարշավի ընթացքում Ձեզ առաջարկվե՞լ է ընտրակաշառք (օժանդակություն)



Ընտրակաշառք է առաջարկվել հարցման մասնակիցների 9,6%-ին, ևս 3,2%-ը տեղյակ է եղել ընտրակաշառք բաժանելու փաստին: Վերջիններիս 79,6%-ի (կամ բոլոր հարցվածների 10%-ի) համոզմամբ առաջարկված ընտրակաշառքը բաժանվել է Ս. Դարբինյանի թիմի կողմից, 20,4%-ի (կամ բոլոր հարցվածների 2%-ի) կարծիքով՝ և՛ Ս. Դարբինյանի, և՛ Գ. Հովսեփյանի թիմերի կողմից: Առաջարկված ընտրակաշառքն, ըստ հարցվողների, հիմնականում եղել է գումարի տեսքով:

Հարց 4. Ու՞մ օգտին է առաջարկվել ընտրակաշառքը (օժանդակությունը)



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի քաղաքապետի ընտրություններին մոնիտորինգի են ենթարկվել վարչական ռեսուրսի և նրա բաղկացուցիչ մասերի՝ ինստիտուցիոնալ, ֆինանսական և լրատվական ռեսուրսի օգտագործման դեպքերը: Մոնիտորինգը բացահայտել է, որ վանաձորյան ընտրություններում չարաշահվել են առավելապես առաջին՝ ինստիտուցիոնալ և պակաս չափով երկրորդ՝ ֆինանսական բաղադրամասերը: Երրորդ՝ լրատվական ռեսուրսը հիմնականում զերծ է մնացել չարաշահումից, քանի որ տեղի մասնավոր հեռուստառադիոընկերությունները փորձել են հավասար մոտեցում ցուցաբերել թեկնածուների նկատմամբ: Եվ եթե նույնիսկ որոշակի զեղչեր է կիրառվել որևէ թեկնածուի համար, ապա այդ թեկնածուն եղել է ոչ թե վարչական ռեսուրսին տիրապետող գործող քաղաքապետը, այլ ՀԿԿ ներկայացուցիչը:

Ինստիտուցիոնալ ռեսուրսն, ինչպես և սպասվում էր, չարաշահվել է գործող քաղաքապետի կողմից: Առաջին հերթին դրա վառ արտահայտությունը «Վանաձորի օր» տոնակատարությունն էր, որը սկսվել է սեպտեմբերի 23-ին և շարունակվել է մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ՝ դրան գումարած հոկտեմբերի 14-ի համերգը: Այս դեպքում թույլ է տրվել միանգամից երեք խախտում: Առաջին, տոնակատարության շրջանակներում գործող քաղաքապետի օգտին սկսվել է քարոզչություն իրականացվել, երբ դեռ չկար դրա իրավունքը (օրինական քարոզչությունը սկսվել է սեպտեմբերի 27-ին), երկրորդ, տոնակատարությունը ձգվել է 9 օր՝ օգտագործվելով քարոզչության համար, և երրորդ, տոնակատարության շրջանակներում գործող քաղաքապետի օգտին քարոզչություն է իրականացվել պաշտոնատար անձանց կողմից:

Ինստիտուցիոնալ ռեսուրսի չարաշահման երկրորդ ակնհայտ դեպքը քաղաքապետարանի՝ միանգամից 12 աշխատակցի արձակուրդ գնալն էր և գործող քաղաքապետի օգտին քարոզչություն իրականացնելը: Հասկանալի է, որ մյուս թեկնածուները զրկված են եղել նման հնարավորությունից:

Գործող քաղաքապետի օգտին քվեարկելու պարտադրանքով ճնշումներ են իրականացվել թե՛ պետական, և թե՛ համայնքային ենթակայության հիմնարկներում, այդ թվում, ըստ դիտարկող խմբի ձեռք բերած տվյալների, կրթական կառույցներում և նույնիսկ զինկոմիսարիատում: Միևնույն ժամանակ, ինչպես նշվել է վերը, զինվորականության միջամտության շնորհիվ վերաբացվել են ճնշումների ներքո փակված՝ Գ. Հովսեփյանի երկու շտաբերը:

Ֆինանսական ռեսուրսի չարաշահման տիպիկ օրինակ կարելի է համարել նույն՝ «Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված միջոցառումների շարքը, քանի որ դրա բացակայության դեպքում նույն միջոցառումները կազմակերպելու համար թեկնածուն ստիպված պետք է լիներ ներդնելու պատկառելի միջոցներ:

Ինչ վերաբերում է թեկնածուների կողմից ծախսված միջոցներին (Ս. Դարբինյանի կողմից՝ 18,2 մլն դրամ, Գ. Հովսեփյանի կողմից՝ 11,7 մլն դրամ և Ա. Ղուկասյանի կողմից՝ մոտ 0,5 մլն դրամ), ապա գործող ԸՕ-ով սահմանված չէ համայնքապետի ընտրությունների ժամանակ թեկնածուի բացած հիմնադրամի վերին սահմանը, և այդ առումով օրենքի տեսակետից էական չէ, թե որքան է ծախսել թեկնածուն: Այլ հարց է, որ դիտարկման համաձայն իրական ծախսերը ավելի շատ են եղել, քան թեկնածուների կողմից տրամադրված կինեն ԸԸՀ: Որպես օրենքի (ԸՕ հոդված 128.2) խախտում կարելի է դիտարկել Ա. Ղուկասյանի նախընտրական հիմնադրամի բացակայությունը:

Քաղաքապետի թեկնածուների նախընտրական ծախսերի մասին տեղեկություն տրամադրելու՝ թիվ 30 ԸԸՀ նախագահին «ՎանաՏուր» մարզային շաբաթաթերթի խնդրանքին ի պատասխան ասվել է, որ դրանք վաղուց «արխիվում են»: Մինչդեռ ԸՕ 25.11 հոդվածով սահմանվում է, որ «ոչ ուշ, քան ընտրությունների ավարտից 15 օր հետո» թեկնածուների կողմից ԸԸՀ են ներկայացվում հայտարարագրեր հիմնադրամի միջոցների օգտագործման վերաբերյալ, որն իր հերթին, եռօրյա ժամկետում դրանք ուղարկում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ

ծառայություն, որը հրապարակում է դրանք սահմանված կարգով: Ասվածը ենթադրում է, որ եթե քվեարկությունը կայացել է հոկտեմբերի 16-ին, ապա հայտարարգրերը ոչ թե վաղուց «արխիվացված» պետք է լինեին, այլ ընդհակառակը, դրանք պետք է մոտ ժամանակներս ներկայացվեին հասարակությանը: Այս փաստը ևս խոսում է թափանցիկ աշխատելու՝ հայաստանյան պաշտոնական մարմինների «պատրաստակամության» մասին:

Վանաձորի քաղաքապետի ընտրություններում նորություն էր Գ. Հովսեփյանի նախաձեռնությամբ կայացած հեռուստաբանավեճը, որը սակայն, ըստ դիտարկող խմբի, չարդարացրեց վանաձորցիների ակնկալիքները, քանի որ քաղաքի կարևորոգույն հիմնախնդիրների և նրանց լուծման ուղղությամբ տեսակետներ ներկայացնելու փոխարեն թեկնածուները զբաղվել են միմյանց վիրավորելով: Դա ընկալվել է նաև հենց իրենց կողմից, քանի որ հաջորդ օրը Ս. Դարբինյանը նույն հեռուստաընկերության եթերից ներողություն է խնդրել հեռուստադիտողներից իրենց պահվածքի և չկայացած բանավեճի համար:

Սակայն նորություն չէր ո՛չ Վանաձորի, և ո՛չ էլ Հայաստանի այլ համայնքների ընտրություններում տարբեր թեկնածուների կողմից ընտրակաշառքների օգտագործումը և ճնշումները ոչ իշխանամետ կամ գործող համայնքապետերին մրցակից թեկնածուների և նրանց թիմերի նկատմամբ: Այն, որ ընտրակաշառքի առաջարկի մասին է խոստովանել հարցվողների միայն 10 տոկոսը, հիմնականում պայմանավորված է եղել լարվածությամբ և վախի մթնոլորտով: Ընտրակաշառքների բաժանումը կատարվել է բոլորին ի տես և ոչ մի հակազդեցության չի հանդիպել ո՛չ ընտրական հանձնաժողովների, և ո՛չ էլ հատկապես իրավապահ մարմինների կողմից: Մինչդեռ ընտրակաշառքների զանգվածային և անպատիժ կիրառումը, ինչպես նաև այլ ընտրախախտումները, որոնց մասին վկայել են մի շարք ՀԿ-ներ և լրատվամիջոցներ, խեղաթյուրում են ընտրական համակարգը՝ ժողովրդավարության այդ հիմնական մեխանիզմը վերածելով իմիտացիայի և հանրապետության քաղաքացիների գիտակցության մեջ հարցականի տակ դնում ընդհանրապես իրենց ձայնի կարևորության հանգամանքը թե՛ պաշտոնյաների ընտրության գործում, և թե՛ գալիք սահմանադրական բարեփոխումների հանրաքվեում:

Հավելված 9

«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում»

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ք. Վանաձոր, 2005թ. նոյեմբերի 5

ՕՐԱԿԱՐԳ

13.45-14.00	*Գրանցում*	
14.00-14.05	Ողջույնի խոսք	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ** Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրասփարենսի Ինքրնեշնլ Հայաստան, մոնիտորինգային խմբի համակարգող
14.05-14.20	«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի արդյունքների ամփոփում	**ԻՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ** Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոնի Լոռու մարզային համակարգող
14.20-14.40	Վանաձորի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգի տվյալների ներկայացում	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ**
14.40-15.00	Դիտարկող աշխատանքային խմբի անդամներին վկայականների և խրախուսական մրցանակների բաշխում	**Կ. ՂԱՐԻԲՅԱՆ** **Ի.ՀԱԿՈԲՅԱՆ**
15.00-16.00	Հարց ու պարասխան, ելույթներ	
16.00-16.30	Հյուրասիրություն	

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ք. Վանաձոր, Լոռի մարզ
նոյեմբերի 5, 2005թ.

1. Խորեն Գասպարյան, Վանաձորի քաղաքապետի խորհրդական
2. Լյովա Կարապետյան, Վանաձորի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետ
3. Աշոտ Հակոբյան, Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի նախագահ
4. Կարինե Ղուկասյան, «Առողջ կյանք» ՀԿ նախագահ
5. Աննա Սարգսյան, «Լիար» ՀԿ անդամ
6. Հրանտ Այվազյան, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ նախագահ
7. Նունե Պեպանյան, «Լուսաստղ» ՀԿ նախագահ
8. Արմեն Մատինյան, Համահայկական «Նոր սերունդ» երիտասարդական միության նախագահ
9. Նարինե Ղազարյան, «Խաչվող ուղիներ» ՀԿ նախագահ
10. Կամո Եգանյան, «Առաջընթաց» ՀԿ նախագահ
11. Արմեն Սախլյան, «Լոռի TV» հեռուստաընկերության նախագահ
12. Լուսինե Սարգսյան, «Լոռի TV» հեռուստաընկերության լրագրող
13. Մանանա Ամյան, «Քաղաքացիական նախաձեռնություն» պարբերականի լրագրող
14. Մանվել Միկոյան, «Լոռու մարզ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր
15. Հայկազ Սիմիկյան, «Վանաձորյան խճանկար» շաբաթաթերթի խմբագիր
16. Սամվել Հարությունյան, «ՄԻԳ» մեդիա հոլդինգի նախագահ
17. Սուրեն Արսենյան, Հանրային ռադիոյի թղթակից
18. Տաթև Շահվերդյան, ակտիվ քաղաքացի
19. Աիդա Պետրոսյան, ակտիվ քաղաքացի

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ք. Գորիս, 2005թ. նոյեմբերի 8

ՕՐԱԿԱՐԳ

14.45-15.00	*Գրանցում*	
15.00-15.05	Ողջույնի խոսք	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ** Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրասփարենսի Ինքրնեշնլ Հայաստան, մոնիտորինգային խմբի համակարգող
15.05-15.20	«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի արդյունքների ամփոփում	**ԱՐՏԱՇԵՍ ՏՈՌՈՉՅԱՆ** Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոնի Սյունիքի մարզային համակարգող
15.20-15.40	Վանաձորի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգի տվյալների ներկայացում	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ**
15.40-16.00	Դիտարկող աշխատանքային խմբի անդամներին վկայականների և խրախուսական մրցանակների բաշխում	**Կ. ՂԱՐԻԲՅԱՆ** **Ա. ՏՈՌՈՉՅԱՆ**
16.00-17.00	Հարց ու պարասխան, ելույթներ	
17.00-17.30	Հյուրասիրություն	

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ք. Գորիս, Սյունիքի մարզ
նոյեմբերի 8, 2005թ.

1. Նելսոն Ոսկանայան, Գորիսի քաղապետ
2. Կարեն Տեր-Մկրտչյան, Գորիսի փոխքաղաքապետ
3. Նելսոն Միրաքյան, Գորիսի քաղաքապետարանի կոմունալ-կենցաղային բաժնի ներկայացուցիչ
4. Սեյրան Գևորգյան, Գորիս ՏՆՏ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
5. Ջեֆ Բերգ, Խաղաղության կորպուսի կամավոր
6. Արտաշես Տոռոզյան, «Գորիսիս ուսուցիչների միություն»ՀԿ նախագահ
7. Աննա Ավետիսյան, «Գորիսի ուսուցիչների միություն»ՀԿ օգնական
8. Արթուր Վարդազարյան, «Նոր Հորիզոններ» ՀԿ նախագահ
9. Արմինե Հովակիմյան, «Պեռասս» էկոլոգիական ՀԿ նախագահ
10. Գեղամ Այվազյան, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիայի Սյունիքի մարզի ներկայացուցիչ
11. Լենա Հովսեփյան, «Գորիսի տիկնանաց օջախ» ՀԿ նախագահ
12. Վարդուհի Դադունց, «Արքայադուստր Փարվանա» ՀԿ նախագահ
13. Ժիրայր Մարտիրոսյան, «Գորիսի ստեղծագործաողներ» ՀԿ նախագահ
14. Ռուզաննա Տոռոզյան, «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ նախագահ
15. Արփինե Բաղդասարյան, «Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն» ՀԿ նախագահ
16. Սևադա Խոջաբաղյան, Գորիսի «Անգլերենի ուսուցման կենտրոն» ՀԿ նախագահ
17. Արամ Մուսախանյան, «Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն» ՀԿ նախագահ
18. Համլետ Հարությունյան, «Բումերանգ» ՀԿ նախագահ
19. Նելլի Ղուշունց, «Ուսուցիչ» թերթի լրագրող
20. Քրիստինե Սարգսյան, «Գեա» էկոլոգիական կազմակերպություն
21. Անդրանիկ Հարությունյան, Սախարովի իրավաբանական կենտրոնի Սյունիքի մասանաճյուղ
22. Եվգենիա Խալաֆյան, թիվ 5 մսուր մանկապարտեզի դաստեարակ
23. Գրետա Գրիգորյան, «Ջանգեզուր» թերթի խմբագիր
24. Սուսաննա Իսաջանյան, «Հզոր Սյունիք» մարզային թերթ
25. Ռազմելա Ավանեսյան, «Լաստ» տեղական հեռուստատեսություն
26. Տոռոզյան Ֆլորա, Գորիս համայանքի անդամ
27. Աննա Արզումանյան, թիվ 2 միջն. դպրոցի աշակերտուհի
28. Մարիամ Բալասանյան, թիվ 6 միջն. դպրոցի աշակերտուհի
29. Լիլիթ Մկրտչյան, կամավոր աշխատակից

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ք. Վայք, 2005թ. նոյեմբերի 9

ՕՐԱԿԱՐԳ

13.45-14.00	*Գրանցում*	
14.00-14.05	Ողջույնի խոսք	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ** Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրասփարենսի Ինքրնեշնլ Հայաստան, մոնիտորինգային խմբի համակարգող
14.05-14.20	«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի արդյունքների ամփոփում	**ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ** Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոնի Վայոց Ձորի մարզային համակարգող
14.20-14.40	Վանաձորի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգի տվյալների ներկայացում	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ**
14.40-15.00	Դիտարկող աշխատանքային խմբի անդամներին վկայականների և խրախուսական մրցանակների բաշխում	**Կ. ՂԱՐԻԲՅԱՆ** **Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ**
15.00-16.00	Հարց ու պարասխան, ելույթներ	
16.00-16.30	Հյուրասիրություն	

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ք. Վայք, Վայոց Ձորի մարզ
նոյեմբերի 9, 2005թ.

1. Թարո Ավետյան, Վայքի քաղաքապետ
2. Վիգեն Գասպարյան, Վայքի փոխքաղաքապետ
3. Արամ Գրիգորյան, Մարզպետարանի տարածքային կառավարման բաժնի վարիչ
4. Գևորգ Մարգարյան, Վայքի ճարտարապետ
5. Համլետ Խաչատրյան, քաղաքապետարանի կոմունալ հարցերով պատասխանատու
6. Դավիթ Մինասյան, ավագանու անդամ
7. Նունե Պետրոսյան, Մարտիրոս ԲՀ նախագահ, ավագանու անդամ
8. Հովիկ Մուշկամբարյան, «Սանմաքրում և բարեկարգում» ՓԲԸ տնօրեն, ավագանու անդամ
9. Շիրակ Միքայելյան, «Վայքի կանաչներ» ՀԿ նախագահ, ծրագրի աջակցող
10. Արմինե Սաֆարյան, Հույս-98 ՀԿ նախագահ
11. Արսեն Վարդանյան, Ակսել ՀԿ նախագահ
12. Գայանե Պետրոսյան, Վայոց ապագա ՀԿ գործադիր տնօրեն
13. Արամ Հովսեփյան, Վայքի ինֆորմացիոն տեխնոլոգիաների աջակցման կենտրոն ՀԿ նախագահ
14. Գևորգ Գևորգյան, «Հայկական Կարմիր խաչի» Վայքի մասնակցյուղի պատասխանատու
15. Վալյա Խաչատրյան, «Վայքի Մարզատեխնիկական ակումբ» ՀԿ նախագահ
16. Բախշիկ Մարգարյան, Արհմիությունների Վայքի տարածաշրջանային նախագահ
17. Վարդուշ Թունյան, թիվ 1 դպրոցի տնօրեն
18. Սլավիկ Աթանակինյան, թիվ 2 դպրոցի տնօրեն
19. Արուսիկ Սայադյան, Բժշկուհի, ծրագրի աջակցող
20. Հովսեփ Ձաքարյան, իրավաբան/համայնքի ներկայացուցիչ
21. Արամ Արամյան, համայնքի ներկայացուցիչ
22. Սեդա Բաբայան, համայնքի ներկայացուցիչ
23. Անահիտ Այվազյան, համայնքի ներկայացուցիչ
24. Սամվել Մնացականյան, Ջրաղվածության կենտրոնի տնօրեն
25. Մամիկոն Հովհաննիսյան, համայնքի ներկայացուցիչ
26. Կարեն Ստեփանյան, համայնքի ներկայացուցիչ
27. Օֆիկ Ղազարյան, թիվ 2 մանկապարտեզի տնօրեն
28. Արտակ Գաբրելյան, փոքր գործարար
29. Հասմիկ Հովհաննիսյան, «Ասպեկտ» թերթի գլխավոր խմբագիր
30. Վարդան Համբարձումյան, համայնքի ներկայացուցիչ
31. Աբով Բունիաթյան, մարզադպրոցի տնօրեն

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ք. Աշտարակ, 2005թ. նոյեմբերի 11

ՕՐԱԿԱՐԳ

14.00-14.15	*Գրանցում*	
14.15-14.25	Ողջույնի խոսք	**ՆԱՌԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ** Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրասփարենսի Ինթրնեշնլ Հայաստան, ծրարգրերի համակարգող
14.20-14.40	«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի արդյունքների ամփոփում	**ԳԵՎՈՐԳ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ** Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոնի Արագածոտնի մարզային համակարգող
14.40-15.00	Վանաձորի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգի տվյալների ներկայացում	**ՎԱԽԹԱՆԳ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ** Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրասփարենսի Ինթրնեշնլ Հայաստան, մոնիտորինգային խմբի համակարգող և լրատվամիջոցների գծով մասնագետ
15.00-15.20	Դիտարկող աշխատանքային խմբի անդամներին վկայականների և խրախուսական մրցանակների բաշխում	**Ն.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ** **Գ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
15.20-16.20	Հարց ու պարասխան, ելույթներ	
16.20-17.30	Հյուրասիրություն	

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ք. Աշտարակ, Արագածոտնի մարզ
նոյեմբերի 11, 2005թ.

1. Սաթենիկ Զորյան, Արագածոտնի մարզպետարանի լրատվության բաժնի պետ
2. Հրաչյա Խաչատրյան, Արագածոտնի փոխմարզպետ
3. Գագիկ Շահազիզյան, Աշտարակի փոխքաղաքապետ
4. Ռուշան Մկրտչյան, Աշտարակի փոխքաղաքապետ
5. Դմիտրի Մարտիրոսյան, Աշտարակի քաղաքապետի խորհրդական
6. Գևորգ Եղիազարյան, Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար
7. Զոհրաբ Գևորգյան, Քաղաքապետարանի մասնագետ
8. Հովհաննես Բալայան, Քաղաքապետարանի բաժնի պետ
9. Պետրոս Զոհրաբյան, Քաղաքապետարանի բաժնի պետ
10. Եղիշ Հովհաննիսյան, Աղբահանություն իրականացնող ծառայության տնօրեն
11. Մարինե Շահազիզյան, Արագածոտնի ՀԿ ֆորումի նախագահ
12. Գայանե Դանիելյան, ԱշՏԿԱ նախագահ
13. Սաթենիկ Հովսեփյան, ԱշՏԿԱ գործադիր տնօրեն
14. Գայանե Պետրոսյան, Արագածոտնի մամուլի ակումբի նախագահ
15. Անժելա Հովհաննիսյան, Հաշմանդամ երեխաների ծնողների «Ծիծեռնակ» կազմակերպության նախագահ
16. Արարատ Գափոյան, «Արագած» ՀԿ-ի նախագահ
17. Վարդազար Մանոյան, «Ներկապնակ» ՀԿ-ի նախագահ
18. Ֆենյա Թևանյան, Հասարակական նախաձեռնությունների կենտրոնի նախագահ
19. Մարինե Ատոմյան, էլեկտրոնային կառավարման համակարգի Արագածոտնի ներկայացուցչություն
20. Նինա Ղազարյան, Ս.Շահազիզի անվան դպրոցի տնօրեն
21. Ժենյա Բրյան, Լրագրող
22. Նորայր Ղոնաղչյան, Լրագրող
23. Ավիկ Ազիզյան, Ավագանու նախկին անդամ
24. Նազելի Դավթյան, Հակակոռուպցիոն խմբի անդամ

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ք. Իջևան, 2005թ. նոյեմբերի 11

ՕՐԱԿԱՐԳ

15.00-15.15	*Գրանցում*	
15.15-15.20	Ողջույնի խոսք	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ** Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրասփարենսի Ինքրնեշնլ Հայաստան, մոնիտորինգային խմբի համակարգող
15.20-15.40	«Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոն» և «Թափանցիկության և մասնակցության խթանումը տեղական ինքնակառավարման մակարդակում» ծրագրերի արդյունքների ամփոփում	**ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոնի Տավուշի մարզային համակարգող
15.40-16.00	Իջևանի քաղաքապետի ընտրությունների մոնիտորինգի տվյալների ներկայացում	**ԿԱՐԻՆԵ ՂԱՐԻԲՅԱՆ**
16.00-16.20	Դիտարկող աշխատանքային խմբի անդամներին վկայականների և խրախուսական մրցանակների բաշխում	**Կ. ՂԱՐԻԲՅԱՆ** **Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ**
16.20-17.00	Հարց ու պարասխան, ելույթներ	
17.00-17.30	Հյուրասիրություն	

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ք. Իջևան, Տավուշի մարզ
նոյեմբերի 11, 2005թ.

1. Վարուժան Ներսիսյան, Իջևանի քաղաքապետ
2. Գառնիկ Բլբուլյան, “Բարդի” ՍՊԸ տնօրեն
3. Արման Գևորգյան, ՀՏԿ Տավուշի մարզի ներկայացուցիչ
4. Լիա Ներկարարյան, ՀՏԿ Տավուշի մարզի ներկայացուցչի օգնական
5. Հայկ Մարդանյան, ԵԿԽ ներկայացուցիչ
6. Ստելլա Ավագյան, Կանանց իրավունքների պաշտպան
7. Արտուշ Ամիրյան, “Հույսի կամուրջ” ՀԿ ներկայացուցիչ
8. Մանուշ Մարալչյան, “Երիտասարդ Տավուշ” ՀԿ նախագահ
9. Մերի Թուխիկյան, “Կանաչ Տավուշ” ՀԿ ներկայացուցիչ
10. Անդրանիկ Սիմոնյան, “Նվաճում” ՀԿ
11. Սամվել Ուլիխանյան, “Ուլիխանյան եղբայրներ” ՀԿ
12. Նառա Խաչիկյան, Երիտասարդ կարմիր խաչի ընկերություն
13. Գայանե Համբարձումյան, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ Տավուշի մարզում
14. Նաիրա Գևորգյան, “Տավուշ” թերթ
15. Տաթևիկ Նազինյան, “Իջևան” թերթ
16. Դավիթ Մաիլյան, ակտիվ քաղաքացի
17. Ցողիկ Մարկոսյան, ակտիվ քաղաքացի
18. Կարեն Դիլբարյան, ակտիվ քաղաքացի